Մ. ՋՄՇԿ
ՎԵԱՆԻ

# „ԾԻՅԻ"

1899 г. № 1279

# ՕՐԱՑՈՅՑ

# 1900 Թ.

Библиотека Института Востоковедения Академии Наук СССР

6728

Азiатскаго Музеума
ASIAT. C. A. 1818

ՏԱՍՆԵՒԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

...ն արձակմունք։
Դպրոցակա[ն] հիշեցակարք։
1) Տօնք հիւալի տօնք Ծնն-
5. 6. 7. և 13. Յայտնութեան Քրի-
դեան և Անուանակոչութեան
Յունվ. 15 Օր Անուան Կաթողիկոսի։
Վեհափառ Մկրտիչ Ա. [Հ]այ։
Փետր. 14 Տեառնընդառաջ ... րավարացն։
17 Ս. Վարդանանց զօ...ն Ս. Գրի-
Մարտի 25 Մտին ի Վիրապ
գորի Լուսաւորչին։
Ապրիլ 7 Տօն Աւետման։ ...եցին Ս.
Յունիսի 10 Ելեցն ի Վիրա... Ս. Գրի-
Գրիգորի Լուսաւորչին։
Յունիսի 24 Գիւտի նշխարաց ... ի Ս.
գորի Լուսաւորչին։ ...ի մերոց
Յուլիսի 29 Ս. Թարգմանչ... ին Թադէոսի
Սահակայ և Մեսրոպայ։
Յուլիսի 22 Ս. Առաք...
և Ս. Սանդխտոյ կուս... Աստուածածնի։
Սեպ. 8 Տօն Ծննդ... ընդարձ Ս. Օծման
Հոկտեմբերի 1 Տ... Ս. Կաթողիկոսի։
Վեհափառ ...այու. Ս. Աստուածածնի,
... 2 Ս. Առաքելոցն Թադէոսի և
Բարդուղիմէոսի։
Դեկտ. 9 Տօն Յղութեան Ս. Աս-
տուածածնի ի յԱննայէ։


1355
059


# ԾՈՑԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՕՐԱՑՈՅՑ

# 1900

## ԹՈՒԱԿԱՆԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ

ՆԱՀԱՆՋ

Աշխատութիւն
ՄԱԿԱՐ ՉՄՇԿԵԱՆԻ

Տասնևեւթներորդ տարի


БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР



ՏՓԽԻՍ
Տպարան Տ. Մ. Ռոտինեանցի։
Типогр. Т.М. Ротиніанца. Гол. пр. № 41
1899

Дозволено цензурою. Тифлисъ, 17-го Апрѣля 1899 года.

49969-աԻ

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՌ-Арм ССР
ИМ. А. М[я]сникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

35869-66



## 1900 Թ. ՀԱՅՈՑ ՏՕՄԱՐԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐԸ

Գիր տարւոյ . . . . . . . ՄԺ
Վերադիր . . . . . . . Թ
Եօթներեակ . . . . . . . ՁԷ
Իննեւտասներեակ . . . . 18
Տանուտէրն . . . . . . . Զուկն

---

## ՏԱՐԵՄՈՒՏՆԵՐ

| | | |
|---|---|---|
| Հայոց՝ ըստ բուն Տօմարի | Օգոստ. | 11-ին |
| Ռուսաց՝ | Յունվարի | 1 » |
| Լատինաց՝ (ըստ Նոր Տօմ.) | Դեկ. | 19 » |
| Հաբեշաց՝ | Օգոստոսի | 26 » |
| Մահմեդականաց՝ | Յունիսի | 10 » |
| Հրէից՝ | Սեպտեմբերի | 7 » |
| Չինաց՝ | Փետրուարի | 1 » |

2001



Ընտրեալ Սսի կաթողիկոս—ԳՐԻԳՈՐԻՍ ԱՐՔԵՊ. ԱԼԵԱԹՃԵԱՆ
Վախճանեալ 15 Օգոստ. 1899 Թ.



## ՀԱՅՈՑ ՇԱՐԺԱԿԱՆ ԵՒ ԱՆՇԱՐԺ ՅԱՅՏ-ՆԻ ՏՕՆԵՐԸ, ԵՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ,

Օր Կաղ. Շաբաթ Յունվ. 1-ին
» ԾՆՆԴԵԱՆ օր Հինգշ. 6 »

Մէջոց ուտիք 25 օր:

Առաջաւորաց Բարեկ. Յունվ. 30 »
ՕՐ ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋԻ Բշ. » 14 »
Բուն-Բարեկենդան Փետրվ. 20 »
ՕՐ ԱՒԵՏՄԱՆ Ուրբաթ » 7 »
ԶԱՏԻԿ . . . . Ապրիլ 9 »
Երեւման Ս. Խաչի Մայիսի 7 »
ՀԱՄԲԱՐՁՈՒՄՆ » 18 »
ՀՈԳԵԳԱԼՈՒՍՏ » 28 »
Բարեկ. Ս. Լուս. պհց. Յուն. 18 »
Ս. Գրիգոր Լուսաւորիչ Յուն. 24 »
Բարեկ. Վարդ. պհց. . » 9 »

ՎԱՐԴԱՎԱՌ . . . . . » 16 »
Միջոց ուտիք երեք շաբաթ
Բարեկ. Ս. Ածածնի պհց. Օգ. 6 »
ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ Ս. Ածած. » 13 »
Միջոց ուտիք չորս շաբաթ
Բարեկենդ. Ս. Խաչի. Սեպտ. 10 »
ԽԱՉՎԵՐԱՑ. Սեպտեմբերի 17 »
Բարեկ. Վարագայ Ս. Խաչի » 24 »
Վարագայ Ս. Խաչ. Հոկտ. 1 »
Միջոց ուտիք 7 շաբաթ։
Գիւտ Խաչ. . . Հոկտեմբ. 29 »
Յիսնակաց Բարեկ. Նոյեմբ. 19 »
Ս. Յակոբայ Բարեկ. Դեկտ. 10 »
Միջոց ուտիք 12 օր։
Բարեկ. Ծննդ. պհց. հինգշ. » 28 »

---



Այն օրերը, երբ Հայաստանեայց եկեղեցւոյ օրէնքով պսակի խորհուրդ կատարելն արգելվում է։

Ամբողջ մեծի պահոց և Յինանց օրերի ընթացքում. մինչև Եղիական—առաջին Կիւրակէն Յարութեան։

Այն Կիւրակէ երեկոներին, երբ միւս օրը սրբոց տօն չէ:

Ամեն Շաբաթ երեկոներին։

Ամեն լուս—Չորեքշաբթի և լուս-Ուրբաթ երեկոներին։

Շաբաթական պահոց ընթացքում։

Տէրունական մեծ տօների նախընթաց երեկոներին։

Նաւակատեաց Ուրբաթ երեկոներին։

Ծննդեան ութօրէից, Վարդավառի 3 օրերը: Վերափոխման 10-րդ օրը և Ս. Խաչի ամբողջ շաբաթը։



Սինօդի անդամ և ճեմ. Նախկ. տեսուչ
ՍԱՐԳԻՍ ԱՐՔԵՊ. ՏԷՐ-ԳԱՍՊԱՐԵԱՆ
Վախճ. 3 Սեպտ. 1899 թ.

## ԱՍՏՂԱԳԷՏՆԵՐԻ ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆԸ

ՅՈՒՆՈՒԱՐ.— Ջրհոսն. Այս համաստեղութեան տակ ծնուած տղան համեստ է, բարի, սիրելի, խելացի, ուրախ, հետաքրքիր, կասկածոտ և հանճարեղ՝ որից և օգտուող։ Միակ պակասութիւնը անչափ փառամոլութիւնն է։ Սկզբումը չ՛ունեւոր, վերջը կարողութեան տէր, միայն այդ ամենն ևս վատնող։ Երեխաներ նաև քիչ ունեցող։

Իսկ այս համաստեղութեան տակ ծնուած աղջիկը, հաստատակամ է վեհանձն, անկեղծ, չռայլ, ուրախ

և աւելի իր բաւականութիւնների ետեւից ընկնող։ Իր զուարթ բնաւորութեամբն, հեշտութեամբ կտանէ զանազան վշտեր և անյաջողութիւններ, որոնց սպասելու է հենց ամուսնութեան սկզբից։ Շատ տեղ կ'ճանապարհորդի և ջահիլ ժամանակ իր քաշած նեղութիւններից մեծ հարստութիւն ձեռք կբերի. բայց ծերութեան ժամանակ պէտք է զգոյշ լինել, որ անդամալոյծ չ'դառնայ։

Առհասարակ յունուարին ծընուածները հոկտեմբեր ամսուայ կէսից մինչև նոյեմբերի կէսը հիւանդանալուց զգուշանալու են։ Իսկ իրանց գործերի ամենայաջող ժամանակը դեկտեմբերի 15-ից մինչև յունուարի 15-ն է։

Օ Լ

# ՅՈՒՆՎԱՐ

31 ՕՐ

1 Շբ. ԲՅ. Տարեմուտ և Կաղանդ։ 12
3. օր Ծննդեան պահոց։ Ս. Բարսեղի հայրապետին և եղբօր նորին Գրիգորի Նիւսացւոյն, Սեղբեստրոսի Հռովմայ հայրապետին և Աբրայ Եփրեմի Խորին Ասորւոյ։ Ռուսաց՝ Անուանակոչութիւն Տեառն և Ս. Բարսեղի հայրապետին։

2 ✠ Կիր. ԲԿ. 4. օր Ծննդ. պահոց։ 13
Զ. Կիր. զկնի Յիսնակի։

3 Բշ. ԳՅ. 5. օր Ծննդեան պահոց։ 14
Լրումն լուսնի. Ցրտախառն։

4 Գշ. ԳԿ. 6. օր Ծննդ. պահոց։ 15

5 Դշ. ԴՅ. Ծրագալոյց Ծննդեան։ 16
Նաւակատիք։ Երեկոյ. զկնի պատարագի նախատօնակ (մինչև ամսոյս 14-ն ամեն երեկ. նախատօն. կատարել)։ Ռ. Ծրագալոյց Աստուածայայտնութեան։

| Օ | ՅՈՒՆՎԱՐ | Լ |
|---|---|---|
| 6 | ✠ Եշ. դէ. ՏՕՆ ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ Տեառն մերոյ Յսի Քսի: Ջրօրհնէք: Ուտիք է մեզ անմիջոց ութ օր: Ռ. և Յ. Մկրտութիւն Տեառն: | 17 |
| 7 | ✠ Ուր. ոյ. 2 օր Ծննդեան: Յիշատակ մեռելոց: Ռուսաց՝ Ս. Յովհաննու Կարապետին: | 18 |
| 8 | Շբ. ոէ. 3. օր Ծննդեան: | 19 |
| | ☼ Արեգ. 'ի Ջրհոսն մտանէ: | |
| 9 | ✠ Կիր բյ. 4. օր Ծննդեան: | 20 |
| 10 | Բշ. բէ. 5. օր Ծննդեան: | 21 |
| 11 | Գշ. փյ. 6. օր Ծննդեան: | 22 |
| 12 | Դշ. փէ. 7. օր Ծննդեան: | 23 |
| | ☾ Վերջ. քառ. լս. Սառնամանիք: | |
| 13 | ✠ Եշ. դյ. 8. օր Ծննդեան. ՏՕՆ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ: | 24 |
| 14 | Ուր. դէ. Պահք: Յերեկոյին նախատօնակ: Ռուսաց՝ Տօն Ս. կուսին Նունեայ: | 25 |
| 15 | Շբ. ոյ. Տօն ծննդեան Ս. Յովհաննու Կարապետին: Օր Անուանակոչութեան Վեհափառ Մկրտչի Ա. կաթուղ. ամ. հայոց: | 26 |

| Օ | ՅՈՒՆՎԱՐ | Լ |
|---|---|---|
| 16 | ✠ Կիր. ոէ Ա. Կիր. զկնի Ծննդեան: Հարսանիք: | 27 |
| 17 | Բշ. բյ. Ս. Պետրոսի Հայրապետին, Վլասայ եպիս. և Ոքսողոմայ սարկաւագին: | 28 |
| 18 | Գշ. բէ. Ս. Անտօնի Տրփոնի, Պարսամայ և Ոնոփրիոսի ձգն. | 29 |
| 19 | Դշ. փյ. Պահք: | 1 |
| | ◉ Ծնունդն լուսնի. Պարզկայ: | |
| 20 | Եշ. փէ. Ս. Թէոդոսի Թագաւորին և մկն. Նիկեսոսի: | 2 |
| 21 | Ուր. դյ. Պահք: Լատինաց Տեառնընդառաջ: | 3 |
| 22 | Շբ. դէ. Ս. Հայրապետացն Աթանասի և Կիւրղի: | 4 |
| 23 | ✠ Կիր. ոյ. Բ. Կիր. զկնի Ծննդեան: Հարսանիք: | 5 |
| 24 | Բշ. ոէ. Ս. Կիրակոսի և մօրն նորա Յուղիտայի և Ս. վկայիցն Գորդիոսի, Պօղիքտոսի և Գրիգորիսի: | 6 |
| 25 | Գշ. բյ. Ս. Վահանայ Գողթնացւոյն, Եւգենեայ կուսին և | 7 |

| Ս | ՅՈՒՆՎԱՐ | Լ |
|---|---|---|

հօրն նորա Փիլիպպոսի և մօրն Կղոդեայ և երկ. եղբարցն Սերգեայ և Ապիոնի և երկուց Ներքինեացն։

☽ Առ. քառ. լուսնի. Ձնաբերոն։

26 Դշ. բէ. Պահք։ 8

27 Եշ. գէ. Ս. վկայիցն Եւգենիոսի, Մակարիոսի, Վալերիոսի, Կանդիտոսի և Ակիւղասայ։ 9

28 Ուր. գէ. Պահք. 10

29 Շբ. դէ. Ս. Գրիգորի Աստուածաբանին։ 11

30 ✠ Կիր. դէ. Գ. Կիր. զկնի Ծննդեան։ Բարեկենդան Առաջաւորաց պահոց։ 12

31 Բշ. ոէ. 1. օր Առաջաւ. պահոց։ 13

—

Այս ամսուայ մէկից մինչև 31-ը օրն աւելացել է 1 ժ. 52 րոպէ.

---

ՓԵՏՐՈՒԱՐ. — Ձուկն. Այս համաստեղութեան տակ ծնուած տղան խաղամոլ է, համարձակ, գիտուն, անապարծ և զուարթ։ Ջահիլ ժամանակը չ'ունենոր, սակայն հարստանալուց յետոյ կ'չռայլի և կ'վատնի։ Թէև լաւ շրջանների սիրահար, բայց մինչև 40 տարեկան հասակը կանանցից քամբաղտ կլինի։ Եւ իր անընդունակութեան շնորհիւ վնասներ կրելով՝ ինքն միայն կ'տուժի։

Իսկ այս համաստեղութեան տակ ծնուած աղջիկը հաղուագիւտ գեղեցկուհի է լինում, յաճախ, սրտով բարի, խելքով, ընդունակութեանց տէր և դրական կարծիքներով։ Երեխաներ քիչ կունենայ։

| Օ | | Ն |
|---|---|---|
| | # ՓԵՏՐՎԱՐ | |
| | 23 ՕՐ | |
| 1 | Գշ. աէ. 2. օր Առաջաւ. պահոց։ | 14 |
| 2 | Դշ. բջ. 3. օր Առաջաւ. պահոց։ Ռուսաց բէ. Տեառնընդառաջ | 15 |
| | ◎ Լր. չս. Զիւն. տեղ տեղ Անձրև։ | |
| 3 | Եշ. բէ. 4. օր Առաջաւ. պահոց։ | 16 |
| 4 | Ուր. գջ. 5. օր Առաջաւ. պահոց։ Ցիշատակ Յովաննու մարգարէին։ | 17 |
| 5 | Շբ. գէ. Ս. Սարգսի զօրավարին և որդւոյ նորա Մարտիրոսի և չորեքտասան զինուորացն։ Հանգստեան օր ուխտի Տփխիսի Ս. Սարգիս եկեղեցւոյ։ | 18 |
| 6 | ✠ Կիր. դջ. Դ. Կիր. զկնի Ծննդեան։ Հարսանիք։ | 19 |
| | ☼ Արեգակն ի Ձուկն մտանէ։ | |
| 7 | Բշ. դէ. Ս. Ատովմեանց զօրավարացն և Ս. Մարկոսի եպիսկոպոսին. Պիոնի քհն. Կիւրղի և Բենիամինի սարկաւագացն և Ս. վկայիցն Արգիմենհի, Որմզդանայ և Սայենի։ Օր էջան. ջերմութ. արևու յօդս։ | 20 |

| Օ | ՓԵՏՐՎԱՐ | Ն |
|---|---|---|
| 8 | Գշ. աջ. Ս. Սուքիասեանց վկայիցն։ | 21 |
| 9 | Դշ. աէ. Պահք։ | 22 |
| 10 | Եշ. բջ. Ս. Ոսկեանց քահայիցն։ | 23 |
| | ☾ Վր. քռ. լս խոնաւ եղանակ։ | |
| 11 | Ուր. բէ. Պահք։ | 24 |
| 12 | Շբ. գջ. Ս. ՍԱՀԱԿԱՅ ՊԱՐԹԵՒԻ հայրապետին մերոյ։ | 25 |
| 13 | ✠ Կիր. գէ. Ե. Կիր. զկնի Ծննդեան։ Ցերեկոյին նախատօնակ։ | 26 |
| 14 | ✠ Բշ. դջ. ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋ։ Ցերեկոյին. նախատօնակ։ Օր էջանելոյ ջերմութեան արեւու ի ջուրս։ | 27 |
| 15 | Գշ. դէ. Ս. ՂԵՒՈՆԴԵԱՆՑ քահ. | 28 |
| 16 | Դշ. աջ. Պահք։ Ցերեկ. նախատօն. | 29 |
| 17 | ✠ Եշ. աէ. Ս. ՎԱՐԴԱՆԱՆՑ զօրավարացն մերոց և 1036 վկայիցն, որք անկան ի մեծ պատերազմին Աւարայրի։ Տօն ազգային և Ցիշատակ մեռելոց։ | 30 |
| | ◎ Ծն. լուսնի. Սառն եղանակ։ | |
| 18 | Ուր. բջ. Պահք։ | 1 |
| 19 | Շբ. բէ. Կ. Պօլսոյ Ս. Ծուղոլոյ՝ | 2 |

ՊԵՏ. ԿԱՆ. ԳՐԱԴԱՐԱՆ Гос. Библиотека ՀԱՍԽ-Арм. ССР 35869-60

| Օ | ՓԵՏՐՎԱՐ | Լ |
| --- | --- | --- |
| | 150 հայրապետացն։ (Զկնի երեկոյեան ժամասացութեան ծածկեսցի սեղանն վարագուրաւ)։ | |
| 20 | ✠ Կիր. դ՛. Բուն-Բարեկենդան. Եւս Յ. Ո. և Լատինաց։ | 3 |
| 21 | Բշ. ոյ. 1. օր մեծի պահոց։ Օր իջանելոյ ջերմութեան արեւու ի հողն։ | 4 |
| 22 | Գշ. ոլ. 2. օր մեծի պահոց։ | 5 |
| 23 | Դշ. բյ. 3. օր մեծի պահոց։ | 6 |
| 24 | Եշ. բլ. 4. օր մեծի պահոց։ ☽ Առաջին քառորդը լուսնի. Փոփոխական եղանակ։ | 7 |
| 25 | Ուր. ցյ. 5. օր մեծի պահոց։ | 8 |
| 26 | Շբ. ցլ. 6. օր մեծի պահոց։ Ս. Թէոդորոսի զօրավարին.—Եւս Ռուսաց։ | 9 |
| 27 | ✠ Կիր. տյ. 7. օր մեծի պահոց։ Բ. Կիրակի Քառասնորդ. պահոց։ | 10 |
| 28 | Բշ. տլ. 8. օր մեծի պահոց։ | 11 |
| 29 | Գշ. ոյ. 9. օր մեծի պահոց։ | 12 |

—

Այս ամսուայ 1-էց մինչև 29-ը օրն աւելացել է 2 ժ. 7 րոպէ։

ՄԱՐՏ.—Խոյն. Այս համաստեղութեան տակ ծնուած տղան եռանդոտ է, արդարադատ, քաղցրախօս, հետաքրքիր և կրքոտ խառնուածքով (տեմպերամենտ)։ Եւ ինչպէս տուած խօսքը չի պահում, այնպէս էլ իրա խոստումը շուտով մոռանում։

Իսկ այս համաստեղութեան տակ ծնուած աղջիկը գեղեցիկ է, արդարասէր, քաղցրեղէն սիրող, շատակեր և իր նկատած բաների մասին երկարուբարակ դատողութիւններ տուող, այդ պատճառաւ ատախօս են, անխնայ զրպարտող և շուտ զայրացկոտ։

Այս ամսին ծնուածները առհասարակ առևտրի մէջ յաջողութիւն կ՛ունենան, թէև ծլատ կլինեն. միայն նոյեմբեր ամսից զգուշանալու են։

| Օ | | Ն |
|---|---|---|
| | # ՄԱՐՏ | |
| | 31 Օ | |
| 1 | Դշ. ակ. 10. օր մեծի պահոց: | 13 |
| 2 | Եշ. բյ. 11. օր մեծի պահոց: | 14 |
| 3 | Ուր. բկ. 12. օր մեծի պահոց: | 15 |
| | ☉ Լրումն լուսնի. Ցրտաշունչ հողմ. | |
| 4 | Շբ. գյ. 13. օր մեծի պահոց: Ս. Կիւրղի Երուսաղեմայ հայրապետին և միւս Կիւրղի եպ. և մօրն նորա Աննայի: | 16 |
| 5 | ✠ Կիր. գկ. 14. օր մեծի պահոց: Գ. Կիր. Քառասնորդական պահոց.—(Անառակին): | 17 |
| 6 | Բշ. դյ. 15. օր մեծի պահոց: | 18 |
| 7 | Գշ, դկ. 16. օր մեծի պահոց: | 19 |
| 8 | Դշ. այ. 17. օր մեծի պահոց: | 20 |
| | ☼ Արեգ. ի Խոյն մտանէ 10ժ. 38 րոպ. առ. Գարնանամուտ և հաւասարակած—Տիւ և գիշեր հաւասար: | |
| 9 | Եշ. ակ. 18. օր մեծի պահոց: | 21 |
| 10 | Ուր. բյ 19. օր մեծի պահոց: | 22 |
| 11 | Շբ. բկ. 20. օր մեծի պահոց: Ս. | 23 |

| Օ | ՄԱՐՏ | Ն |
|---|---|---|
| | Ցօվհաննու Երուսաղեմայ հայրապետին և Ս. հայրապետացն մերոց Յովհաննու Օձնեցւոյն, Յովհաննու Որոտնեցւոյն և Գրիգորի Տաթևացւոյն: | |
| | ☾ Վերջ. քառ. լս. Ամպամած եղան. | |
| 12 | ✠ Կիր. գյ. 21. օր մեծի պահոց: Դ. Կիր. Քառասնորդական պահոց.—(Տնտեսին): Լատինաց՝ Աւետումն: | 24 |
| 13 | Բշ. գկ. 22. օր մեծի պահոց: | 25 |
| 14 | Գշ. դյ 23. օր մեծի պահոց: | 26 |
| 15 | Դշ. դկ. 24. օր մեծի պահոց: (Միջինք): | 27 |
| 16 | Եշ. այ. 25. օր մեծի պահոց: | 28 |
| 17 | Ուր. ակ. 26. օր մեծի պահոց: | 29 |
| 18 | Շբ. բյ. 27. օր մեծի պահոց: Ս. Մանկացն Քառասնից, որք ի Սեբաստիա կատարեցան: | 30 |
| | ☉ Ծնունդ լս. Փոթորկալից եղ: | |
| 19 | ✠ Կիր. բկ. 28. օր մեծի պահոց: Ե. Կիր. Քառասնորդական պահոց.—(Դատաւորին): | 1 |

| Օ | ՄԱՐՏ | Լ |
|---|---|---|
| 20 | Բշ. գյ. 29. օր մեծի պահոց։ | 2 |
| 21 | Գշ. գկ. 30. օր մեծի պահոց։ | 3 |
| 22 | Դշ. դյ. 31. օր մեծի պահոց։ | 4 |
| 23 | Եշ. դկ. 32. օր մեծի պահոց։ | 5 |
| 24 | Ուր. ժյ. 33. օր մեծի պահոց։ Յերեկոյեան Նախատօնակ։ | 6 |
| | ☽ Առ. քռ. լս. [illegible] եղ. | |
| 25 | ✠ Շբ. ժկ. 34. օր մեծի պահոց։ Ս. ԳՐԻԳՈՐԻ մերոյ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ, սոսկալի չարչարանացն և մտին ի Վիրապն։ Ռուսաց և Յունաց՝ Աւետումն Ս. Աստուածածնի։ | 7 |
| 26 | ✠ Կիր. ըյ. 35. օր մեծի պահոց։ Զ. Կիր. Քառասնորդական պահոց.—(Գալստեան)։ | 8 |
| 27 | Բշ. ըկ. 36. օր մեծի պահոց։ | 9 |
| 28 | Գշ. թյ. 37. օր մեծի պահոց։ | 10 |
| 29 | Դշ. թկ. 38. օր մեծի պահոց։ | 11 |
| 30 | Եշ. ժյ. 39. օր մեծի պահոց։ | 12 |
| 31 | Ուր. ժկ. 40. օր մեծի պահոց։ | 13 |

—

Այս ամսուայ 1-ից մինչև 31-ը օրն աւելացել է 2 ժ. 10 րոպէ։

ԱՊՐԻԼ.—Ցուլն. Այս համաստեղութեան տակ ծնուած տղան աներկիւղ է, կտրուկ, զայրացկոտ, խստասիրտ և իր թշնամիներին հալածող։ Թէև ունևոր՝ բայց ժլատ. բաղդաւորութեամբ կ'փայլի և դրան նպաստող դէպքերը իրա ցանկութիւնները կ'կատարեն։ Շատ էլ կ'ճանապարհորդի։

Իսկ այս համաստեղութեան տակ ծնուած աղջիկը բնութեամբ ուժեղ, եռանդոտ, աշխուժով, և թէև բնութեամբ անժուժկալ կլինի, միայն որպէս ամուսին խոնարհ և հաւատարիմ՝ եթէ իր և իր ամուսնու բնաւորութիւնները իրար նման լինին։

Ապրիլ ամսին ծնուածները առ-հաւատարակ ոտքերի ուռոյցքից զգուշանալու. էն։ Իրանց կեանքը երկու մասի կբաժանուի. առաջին մասը շատ վտանգալից կ'անցնի և կըտևի մինչև 33 տարեկան հասակը։



Օ | Լ

# ԱՊՐԻԼ

## 30 ՕՐ

1 Շբ. այ. 41. օր մեծի պահոց. Յիշատակ Ղազարու Յարութեան։ 14

2 ✠ Կիր. աէ. Է. Կիր. ԾԱՂԿԱԶԱՐԴ։ Պահք։ Յերեկ. Դռնաբացէք։ Եւ Ռուս. և Յ. Ծաղկազարդ։ 15

⊕ Լրումն լուսնի. Անձրևոտ...։

3 Աւագ-Երկուշաբթի բյ. Պահք։ 16

4 Աւագ-Երեքշաբթի բէ. Պահք։ Յիշատակ 10 կուսանաց։ 17

5 Աւագ-Չորեքշաբթի գյ. Պահք։ 18

6 ✠ Աւագ-Հինգշաբթի գէ. ՅԻՇԱՏԱԿ ՈՏՆԼՈՒԱՑԻ։ Պահք։ Յերեկոյեան Խաւարումն։ 19

7 ✠ Աւագ-Ուրբաթ դյ. Պահք։ Յիշ. Չարչարանաց և Խաչելութեան Տեառն մերոյ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ և ԱԻԵՏՈՒՄՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ. 20

8 Աւագ-Շաբաթ դէ. Ճրագալոյց Յարութեան։ Նաւակատիկ։ Յե– 21

| Օ | ԱՊՐԻԼ | Ն |
|---|---|---|
| | ընկոյեան զկնէ պատարագի նախատօնակ։ | |
| | ☼ Արեգակն ի Ցուլն մտանէ։ | |
| 9 | ✠ Կիր. ոյ. ԶԱՏԻԿ։ (Ս. Յարութիւն Քրիստոսի)։ Ուտիք է մեզ անմիջոց մինչև Համբարձումն։ Եւս Յունացն Ռուսաց, որոց ուտիք է մինչև ցՆոր- Կիւրակէ։ Լատինաց ևս Զատիկ։ | 22 |
| | ☾ Վր. քառ. լուսնի. Տեղ տեղ անձրև։ | |
| 10 | ✠ Բշ. ով. 2. օր Զատկի։ Յիշատակ Մեռելոց։ | 23 |
| 11 | ✠ Գշ. թյ. 3. օր Զատկի։ | 24 |
| 12 | Դշ. թվ. 4. օր Զատկի։ | 25 |
| 13 | Եշ. գյ. 5. օր Զատկի։ | 26 |
| 14 | Ուր. գվ. 6. օր Զատկի։ | 27 |
| 15 | Շբ. տյ. 7. օր Զատկի։ Յիշատակ գլխատման Ս. Յովհաննու Մկրտչի։ | 28 |
| 16 | ✠ Կիր. տվ. 8. օր Զատկի։ Բ. Կիր. Նոր Կիւրակէ. (Կրկնազատիկ)։ | 29 |
| | ● Նն. լուսնի. Փոփոխական եղանակ։ | |
| 17 | Բշ. ոյ. 9. օր Յինանց։ | 1 |
| 18 | Գշ. ով. 10. օր Յինանց։ | 2 |
| 19 | Դշ. թյ. 11 օր Յինանց։ | 3 |
| 20 | Եշ. թվ. 12. օր Յինանց։ | 4 |
| 21 | Ուր. գյ. 13. օր Յինանց։ | 5 |
| 22 | Շբ. գվ. 14. օր Յինանց։ | 6 |
| 23 | ✠ Կիր. տյ. 15 օր Յինանց։ Աշխարհամատրան Կիւրակէ. (Կանանչ Կիւրակէ)։ | 7 |
| 24 | Բշ. տվ. 16. օր Յինանց։ | 8 |
| 25 | Գշ. ոյ. 17. օր Յինանց։ | 9 |
| 26 | Դշ. ով. 18. օր Յինանց։ | 10 |
| 27 | Եշ. թյ. 19. օր Յինանց։ | 11 |
| 28 | Ուր. թվ. 20. օր Յինանց։ | 12 |
| 29 | Շբ. գյ. 21. օր Յինանց։ | 13 |
| 30 | ✠ Կիր. գվ. 22. օր Յինանց։ Դ. Կիր. (Կարմիր-Կիւրակէ։) | 14 |
| | ☽ Առ. քառ. լս. Անձրևոտ եղ. | |

Այս ամսուայ 1-ից մինչև 30-ը օրն աւելացել է 2 ժ 4 րոպէ։

ՄԱՅԻՍ.—Եկաւորն. Այս համաստեղութեան տակ ծնուած տըղան ինչպէս արտաքուստ գեղեցիկ է, այնպէս էլ ի ներքուստ հոգով բարի, խելօք, շրջանկատ մեծահոգի, և մասամբ կասկածոտ, ճարպիկ, խորամանկ և ազատ արհեստների սիրահար։ Այդպիսիների սիրտը կարծես սիրոյ և բարեկամութեան համար է ստեղծուած։ Եւ բաղդաւոր են լինում, եթէ իրենց կեանքը կապում են այնպիսի կնոջ կամ բարեկամութեան հետ, որոնք նոյնպէս սոյն համաստեղութեան տակ են ծընուած։

Իսկ ծնուած աղջիկը լինում է գեղեցիկ, բարի, պարզ և հեզ։ Իրանից տարիքով փոքր մարդկանց հետ բախտաւորութիւն չի գտնի, բացի իրա նման բնաւորութիւն ունեցող պատուական ամուսնուց։

Մայիսին ծնուածներն առհասարակ, մարդ թէ կին, գիտութեանց սիրահար են լինում, գործերի մէջ հմուտ, բնաւորութեամբ դիւրաթեք և փափկամարմին։ 31 տարեկան հասակում զգոյշ պէտք է լինեն հիւանդանալուց։

---

Օ Լ

# ՄԱՅԻՍ

## 31 ՕՐ

1 Բշ. դձ. 23. օր Յինանց: 15

☺ Լրումն լս. Անձրևաբեր հովք.

2 Գշ. դկ. 24. օր Յինանց: 16
3 Դշ. աձ. 25. օր Յինանց: 17
4 Եշ. ակ. 26. օր Յինանց: 18
5 Ուր. բձ. 27 օր Յինանց: 19
6 Շբ. բկ. 28. օր Յինանց: 20
7 ✠ Կիր. գձ. 29. օր Յինանց: Ե. 21
Կիր. Տօն Երևման Ս. Խաչի:
8 Բշ. գկ. 30. օր Յինանց: 22

☾ Վր. քռ. լս. Զովաբար եղանակ:

9 Գշ. դձ. 31. օր Յինանց: 23
Ռուսաց՝ Փոխադրութիւն Ս. Նիկողայոսի Սքանչելագործի:
☼ Արեգ. ի Եկաւորն մտանէ:
10 Դշ. դկ. 32. օր Յինանց: 24
11 Եշ. աձ. 33. օր Յինանց: 25
12 Ուր: ակ. 34. օր Յինանց: 26

Օ ՄԱՅԻՍ Լ

13 Շբ. բձ. 35. օր Յինանց: 27
14 ✠ Կիր. բկ. 36. օր Յինանց: 28
Զ. Կիրակէ:
15 Բշ. գձ. 37. օր Յինանց: 29
16 Գշ. գկ. 38. օր Յինանց: 30

☺ Ծն. լս. Գարնանային եղանակ:

17 Դշ. դձ 39. օր Յինանց: 1
18 ✠ Եշ. դկ. 40. օր Յինանց: 2
ՀԱՄԲԱՐՁՈՒՄՆ ՔՐԻՍՏՈՍԻ (Վիճակ).—Եւս Ռուսաց, Յունաց և Լատինաց:
19 Ուր. աձ. 41. օր Յինանց: Պահք: 3
20 Շբ. ակ. 42. օր Յինանց: 4
21 ✠ Կիր. բձ. 43. օր Յինանց: 5
22 Բշ. բկ. 44. օր Յինանց: 6
23 Գշ. գձ. 45. օր Յինանց: 7

☽ Առ. քռ. լս. Անհաստատ եղ.

24 Դշ. գկ. 46. օր Յինանց: Պահք: 8
25 Եշ. դձ. 47. օր Յինանց: 9
26 Ուր. դկ. 48. օր Յինանց: Պահք: 10
27 Շբ. աձ. 49. օր Յինանց: 11
28 ✠ Կիր. ակ. Յիսներրորդ օր է 12

| Օ | ՄԱՅԻՍ | Ն |
|---|---|---|
| | Զատկէն։ ՀՈԳԵԳԱԼՈՒՍՏ (Պենտեկոստէ)։ Բարեկենդան Եղիական պահոց։ Ռուսաց և Յունաց Եւս Պենտեկոստէ։ | |
| 29 | Բշ. ԲՅ. 2. օր Հոգեգալ. Պահք։ Ռուսաց՝ երկրորդ օր Հոգեգալ. | 13 |
| 30 | Գշ. ԲԿ. 3. օր Հոգեգ. Պահք։ | 14 |
| 31 | Դշ. ԳՅ. 4. օր Հոգեգ. Պահք։ | 15 |
| | ☉ Լր. լուսնի. [illegible] | |
| | — | |
| | Այս ամսուայ 1-էց մինչև 31-ը օրն աւելացել է 1 ժ. 17 րոպէ։ | |

ՅՈՒՆԻՍ. — Խեցգետին. Այս համաստեղութեան տակ ծնուած տղան լինում է վիճասէր, կամակոր, խորամանկ, մոլի և ամեն դէպքում աւելի իրան ինքնահաճոյքին և ցնորքներին է հետևում՝ քան առողջ դատողութեանը։

Իսկ ծնուած աղջիկը ինքնասէր է, գործունեայ, աշխատասէր, զգոյշ, արթուն, ամօթխած, հետաքրքիր, ինքնահաւան և մի քիչ ստախօս։

Յունիսին ծնուածներն առհասարակ աչքի են ընկնում իրանց ուշիմ և սրամիտ բնաւորութեամբ։ Ուրիշի սեփհականութիւնից հարստացող են և նշանաւոր մարդկանցից պաշտպանութիւն գտնող։ Գինուց միայն զգուշանալու են։

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

| Օ | | Լ |
|---|---|---|

# ՅՈՒՆԻՍ

30 ՕՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Եշ. գկ. 5. օր Հոգեգ. Պահք: | 16 |
| 2 | Ուր. դյ. 6. օր Հոգեգ. Պահք: | 17 |
| 3 | Շբ. դկ. 7. օր Հոգեգալստեան: | 18 |
| 4 | ✠ Կիր. ոյ. Ա. Կիր. Յարութեան: Յիշատակ Եղիայի Մարգարէին. Յեր. Նախատօնակ: Հարսանիք: | 19 |
| 5 | Բշ. ոկ. Ս. կուսանացն Հռիփսիմեանց: Յերեկոյեան Նախատօնակ: | 20 |
| 6 | Գշ բյ. Ս. կուսանացն Գայանեանց: | 21 |
| 7 | Դշ. բկ. Պահք: Յերեկոյեան Նախատօնակ: | 22 |
| | ☽ Առ. քռ. լս. Փոփոխումն եղ. | |
| 8 | Եշ գյ. Ս. Յովհաննու Կարապետին և Աթանագինէ եպիսկոպ. | 23 |
| 9 | Ուր. գկ. Պահք: Յերեկոյեան Նախատօնակ: | 24 |

| Օ | ՅՈՒՆԻՍ | Լ |
|---|---|---|
| | ☼ Արեգ. ի Խեցգետինն մտանէ 6 ժ. 28 ր. երեկ. Ամառնամուտ և արևադարձ, ցերեկն սկսանի կարճանալ—գիշերն երկարել: | |
| 10 | ✠ Շբ. դյ. Ս. ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ մերոյ—Ելն ի վիրապէն: | 25 |
| 11 | ✠ Կիր. դկ. Բ. Կիր. գլխի Հոգ. ՏՕՆ ԿԱԹՈՒՂԻԿԷ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ: (Կատարի հանդէս յամենայն եկեղեցիս Հայաստանեայց): Հարսանիք: | 26 |
| 12 | Բշ. ոյ. Ս. մկն. Բեթղեհէմի, Ակակիոսի վկային, Մովկիմայ քահանային և Կոնստանտիոսի զինուորին: | 27 |
| 13 | Գշ. ոկ. Ս. կուսանացն Նունեայ և Մանեայ: | 28 |
| 14 | Դշ. բյ. Պահք: | 29 |
| | ⊕ Ծնունդն լուսնի. Տօթ եղանակ: | |
| 15 | Եշ. բկ. Ս. իշխանացն Սահակայ և Յովսէփայ և Ս. վկայիցն Սարգսի և Բագոսի: | 1 |
| 16 | Ուր. գյ. Պահք: | 2 |

Օ | ՅՈՒՆԻՍ | Ն

17 Շբ. ջկ. Ս. ՆԵՐՍԷՍԻ ՄԵԾԻ հայրապետին մերոյ և Խադայ եպիսկոպոսին։ 3

18 ✠ Կիր. դձ. Գ. Կիր. զկնի Հոգեգ. Բարեկենդան Ս. Լուսաւորչի պահոց։ 4

19 Բշ. դկ. Պահք։ Ս. Եպիփանու Կիպրացւոյն, Բաբելայ հայրապ. և 3 աշակերտաց նորին։ 5

20 Գշ. ռձ. Պահք։ Ս. Կոստանդիանոսի Թագաւորին և մօրն նորա Հեղինէի։ 6

21 Դշ. ռկ. Պահք։ 7

22 Եշ. եձ. Պահք։ Ս. Թէոդիտոնի Գաղատացւոյն, Թալիլեայ բժշկին և 7 կուսանացն, որք ի յԱնկիւրեայ կատարեցան։ 8

☽ Առ. քռ. լուսնի. Տօթ եղանակ։

23 Ուր. բկ. Պահք։ Յերեկոյեան Նախատօնակ։ 9

24 ✠ Շբ. ջձ. Գիւտ Նշխարացն Ս. ԳՐԻԳՈՐԻ Լուսաւորչին մերոյ։ 10

Օ | ՅՈՒՆԻՍ | Ն

25 ✠ Կիր. ջկ. Դ. Կիր. զկնի Հոգեգալստեան։ Հարսանիք։ 11

26 Բշ. դձ. Ս. վկայիցն Անտոնինոսի, Թէոփիլոսի, Անիքտոսի և Փոտինոսի։ 12

27 Գշ. դկ. Ս. Դանիէլի Մարգարէին և երից մանկանցն Սեդրակայ, Միսակայ և Աբեդնագովի։ 13

28 Դշ. ռձ. Պահք։ Յերեկոյին Նախատօնակ։ 14

29 ✠ Եշ. ռկ. Սրբոց Թարգմանչացն մերոց ՍԱՀԱԿԱՅ և ՄԵՍՐՈՊԱՅ։ 15
Ռուսաց՝ Ս. Առաքելոցն Պետրոսի և Պօղոսի։

☺ Լրումն լուսնի. Խառն եղանակ։

30 Ուր. բձ. Պահք։ 16

—

Այս ամսուայ 1-էց մինչև 30-ը օրը պակասել է 1 ժ. 24 րոպէ։

ՅՈՒԼԻՍ.—Առիւծն. Այս համաստեղութեան տակ ծնուած տըղան լինում է պարզամիտ, համարձակ, քաջ, առատաձեռն, ազատամիտ, մեծահոգի և չատ անգամ հպարտ. իւր ազնիւ հոգովը (բնաւորութեամբ) հակուած է բարեպաշտութեան և ցաւակցութեան։ Միևնոյն ժամանակ ծաղրասէր է, ուրիշներին զայրացնող և կրքոտ։ Արտաքին գեղեցկութեան շնորհիւ, փափուկ սեռին հաճոյանալու կերպը գիտէ և երկար փաղաքշանքներ շռայլելոց յետոյ հասնում է իւր նպատակին։

Իսկ ծնուած աղջիկը զուարթ է, շնորհալի, բարկացող, համարձակ, չարամիտ, վրիժառու, բայց սիրելի և իրեն ուզածին անչափ մեծարող։

Յուլիսին ծնուածների ամենաբախտաւոր ժամանակն իրանց հասակի միջին տարիքն են և ամենայաջող ամիսն օգոստոսն է։ Ամենից վտանգաւոր տարին իրանց հասակի 43-րդ տարին է՝ որ պէտք է զգուշանալ։



| Օ | | Լ |
|---|---|---|

# ՅՈՒԼԻՍ

31 ՕՐ

1 Շբ. բէ. Ս. Տրդատայ Թագաւորին մերոյ և Աշխէն տիկնոջն և Խոսրովադխտոյն: Ցերեկոյեան նախատօնակ: 17
2 ✠ Կիր. գյ. Ե. Կիր. զկնի Հոգ. Գիւտ Տփոյ Ս. Աստուածամօրն: Հարսանեք: 18
3 Բշ. գէ. Ս. Կալիստրատոսի և 49 վկայիցն և Ղուկիանոսի քահանային: 19
4 Գշ. դյ. Ս. Զաքարիայի մարգարէին: 20
5 Դշ. դէ. Պահք: 21
6 Եշ. եյ. Ս. Եղիսէի Մարգարէին: 22

☾ Վր. քռ. լս. Անձրեւոտ եղան.

7 Ուր. եէ. Պահք: 23
8 Շբ. զյ. Ս. Երկոտասանից Առաքելոցն Քրիստոսի և Ս. Պօղոսի Երեքտասան Առաքելոյն: 24
9 ✠ Կիր. զէ. Զ. Կիր. զկնի Հոգեգ. 25

| Օ | ՅՈՒԼԻՍ | Լ |
|---|---|---|

Բարեկենդ. Վարդավառի պահոց:
10 Բշ. էյ. 1. օր Վարդավ. պահոց: 26
☼ Արեգակն ի Առիւծն մտանէ:
11 Գշ. էէ. 2. օր Վարդավ. պահոց: 27
12 Դշ. ըյ. 3. օր Վարդ. պահոց: 28
13 Եշ. ըէ. 4. օր Վարդ. պահոց: 29
14 Ուր. թյ. 5. օր Վարդ. պահոց: 30

☉ Ծն. լս. Շոգ-տեղ. տեղ կարկուտ:

15 Շբ. աէ. ՅԻՇԱՏԱԿ ՏԱՊԱՆԱԿԻՆ ՀՆՈՅ և ՏՕՆ ՆՈՐՈՅՍ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ: Նաւակատիք: 1
16 ✠ Կիր. բյ. ՎԱՐԴԱՎԱՌ: Մեծահանդէս օր ուխտի Մշոյ Ս. Կարապետ վանքի և Տփխիսայ Ս. Կարապետ եկեղեցւոյն: 2
17 ✠ Բշ. բէ. 2 օր Վարդավառի: Յիշատակ Մեռելոց: Մեծահանդէս օր ուխտի Ծիրանաւորի Ս. Աստուածածին եկեղեցւոյն Տփխիսոյ—(Կրծանիսի): 3
18 Գշ. գյ. 3. օր Վարդավառի: 4
19 Դշ. գէ. Պահք: 5
20 Եշ. դյ. Ս. Եսայեայ մարգարէին: 6

| Օ | ՅՈՒԼԻՍ | Լ |
|---|---|---|
| 21 | Ուր. գէ. Պահք։ Յերեկոյեան նախատօնակ։ | 7 |
| | ☽ Առ. քառ. լս. Փոփոխական եղանակ։ | |
| 22 | ✠ Շբ. ըթ. Ս. ԹԱԴԷՈՍԻ Առաքելոյն և Ս. Սանդխտոյ կուսին։ Ռուսաց՝ Ս. Մարիամու Մագդաղենացւոյն | 8 |
| 23 | ✠ Կիր. ըժ. Բ. Կիր. զկնի Վարդավառի։ Հարսանիք։ | 9 |
| 24 | Բշ. բթ. Ս. Կիպրիանոսի եպիսկոպոսին և 45 վկայիցն և Ս. կուսանացն Յուստինեայ, Եփիմեայ և Քրիստինեայ։ | 10 |
| 25 | Գշ. բժ. Ս. Աթանագինեայ եպիսկոպոսին և տասն աշակերտացն և հինգ վկայիցն։ | 11 |
| 26 | Դշ. փթ. Պահք։ | 12 |
| 27 | Եշ. փժ. Ս. Նախահարցն Ադամայ, Աբէլի, Սեթայ, Ենովքայ, Ենովսայ, Նոյի, Մելքիսեդեկի, Աբրահամու, Իսահակայ, Յովսէփայ, Յակոբայ, Մովսէսի, Ահարոնի, Եղիազարու, Յեսուայ, Սամուէլի, Սամփսոնի, Յեփթայեայ Բարակայ, Գեդէօնի և այլոց Սրբ. Նախահարցն։ | 13 |
| 28 | Ուր. գթ. Պահք։ | 14 |
| | ☺ Լր. լուսնի. Տօթագին եղանակ։ | |
| 29 | Շբ. գժ. Ս. որդւոց և թոռանց Ս. Գրիգորի Լուսաւորչին մերոյ, Արիստակէսի, Վրթանէսի, Յուսկանն, Գրիգորիսի և Դանիէլի։ | 15 |
| 30 | ✠ Կիր. ըթ. Գ. Կիր. զկնի Վարդավառի։ Հարսանիք։ | 16 |
| 31 | Բշ. ըժ. Ս. Մակաբայեցւոցն, Եղիազարու քահանային, Շամունեայ և եօթն որդւոց նորին։ | 17 |

—

Այս ամսուայ 1-ից մինչև 31-ը օրը պակասել է 1 ժ. 26 րոպ.

**ՕԳՈՍՏՈՍ.**—Կոյսն. Այս համաստեղութեան տակ ծնուած տղան բարեկազմ է, անկեղծ, մեծահոգի, խելօք, ողջախոհ, համեստ և բարեգործ։ Կեանքի մէջ վարուելու կերպը չիմանալով և ամեն տեսակ հնարքներից զուրկ լինելով՝ շուտ-շուտ խաբւում է և յափշտակւում։

Իսկ ծնուած աղջիկը ամօթխած է, ժուժկալ, աչքերը գեղեցիկ, երեսի գծագրութիւնը որոշ։ Շուտ կ'ամուսնանայ, իր ընտանիքում սիրելի, բարեպաշտ հաւատարիմ և աննման մայր կլինի, իսկ սորա որդիկը, որոնք աւելի իգական սեռից են լինելու, նոյնպէս մինը միւսից աւելի փայփայող և գեղեցիկ են լինելու։

| Օ | | Լ |
|---|---|---|
| | **ՕԳՈՍՏՈՍ**<br>31 ՕՐ | |
| 1 | Գշ. բյ Ս. Երկոտասանից մարգարէից, Ովսեայ, Ամովսայ, Միքիայ, Յովէլեայ, Աբդիու, Նաւումայ, Ամբակումայ, Յօնանու, Սոփոնիայ, Անգեայ, Զաքարիայ և Մաղաքիայ։ | 18 |
| 2 | Դշ. բէ. Պահք։ | 19 |
| 3 | Եշ. գյ. Ս. Սոփիայ և երից դստերացն, Պիստոսի, Ելպիսի և Ագապի։ | 20 |
| 4 | Ուր. գէ. Պահք։ | 21 |
| | Վր. քռ. լուսնի. Շոգ եղանակ։ | |
| 5 | Շբ. դյ. Ս. Եփեսոսի ժողովոյն 200 հայրապետացն։ | 22 |
| 6 | ✠ Կիր. դէ. Դ. Կիր. զկնի Վարդավառի։ Բարեկենդան Ս. Աստուածածնի պահոց։ Ռ. Վարդավ. | 23 |
| 7 | Բշ. ոյ. 1. օր Ս. Ածած. պահոց։ | 24 |
| 8 | Գշ. ոէ. 2. օր Ս. Ածած. պահոց։ | 25 |
| 9 | Դշ. բյ. 3. օր Ս. Ածած. պահոց։ | 26 |

| Օ | ՕԳՈՍՏՈՍ | Լ |
|---|---|---|
| 10 | Եշ. բկ. 4. օր Ս. Ածած. պահոց: | 27 |
| 11 | Ուր. գյ. 5. օր Ս. Ածած. պահոց: Ըստ տօմարի մերում նաւասարդ և տարեմուտ ՌՅԾ և 4393 Թուականի բուն տօմարի: | 28 |
| | ☼ Արեգակն է Կոյսն մտանէ: | |
| 12 | Շբ. գկ. Տօն Շողակաթի, Ս. ԷՋՄԻԱԾՆԻ, ըստ տեսլեան Ս. Գրիգորի Լուսաւորչին մերոյ: Նաւակատիք: Յերեկոյին նախատօնակ: | 29 |
| 13 | ✠ Կիր. դյ. ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ Ս. Աստուածածնի. Զկնի պատարագի կատարի օրհնութիւն խաղողոյ: Ինն օր նախատօնակ: | 30 |
| | ● Ծն. լս: Զով—տեղ տեղ անձրև: | |
| 14 | ✠ Բշ. դկ. 2. օր Վերափոխման: Յիշատակ մեռելոց: | 1 |
| 15 | Գշ. այ. 3. օր Վերափոխման: Ռուսաց՝ Վերափոխումն: | 2 |
| 16 | Դշ. ակ. 4. օր Վերափ. Պահք: | 3 |
| 17 | Եշ. բյ. 5. օր Վերափոխման: | 4 |
| 18 | Ուր. բկ. 6. օր Վերափ. Պահք: | 5 |
| 19 | Շբ. գյ. 7. օր Վերափոխման: | 6 |

| Օ | ՕԳՈՍՏՈՍ | Լ |
|---|---|---|
| 20 | ✠ Կիր. գկ. 8. օր Վերափոխման: | 7 |
| | ☽ Ա. քռ. լս. Զուարթօրօր եղ. | |
| 21 | Բշ. դյ. 9. օր Վերափոխման: | 8 |
| 22 | Գշ. դկ. Ս. Յովակիմայ և Աննայի ծնողաց Ս. Աստուածածնի և Ս. կանանցն Իւղաբերից: | 9 |
| 23 | Դշ. այ. Պահք: | 10 |
| 24 | Եշ. ակ. Ս. Երեմ. մարգարէին: | 11 |
| 25 | Ուր. բյ. Պահք: Ռուսաց՝ Կայսերական տօն. Յիշատակ նուաճման Արևելեան Կովկասու: | 12 |
| 26 | Շբ. բկ. Ս. Առաքելոցն Թովմայի Յերեկոյին նախատօնակ: Լատինաց՝ Ծնունդ Ս. Աստուածածնի | 13 |
| 27 | ✠ Կիր. գյ. Գ. Կիր. զկնի Վերափոխման Գիւտ—Գօտւոյ Ս. Աստուածածնի: | 14 |
| | ☉ Լր. լուսնի. Անհաստատ եղանակ: | |
| 28 | Բշ. գկ. Ս. Ստեփաննոսի Ուլնեցւոյն և ս. մկայիցն Գոհարի- | 15 |

Նեայ, Ծամոդեսի, Տուքիկոսի և Ռատոկոսի։

29 Գշ. պհ. Ս. մարգարէից Եզե-կիէլի, Եզրի և Զաքարիայի հօրն Ս. Յովհաննու Մկրտչի։ Ռուսաց՝ գլխատումն Ս. Յովհաննու Կարա-պետին: 16

30 Դշ. պհ. Պահք։ 17

Ռուսաց՝ փոխադրութիւն նշխարաց Ս. Ալէքս. Նեւսկացւոյ։

31 Եշ. պհ. Ս. Յովհաննու Կարապե-տին և Յոբայ արդարոյն: 18

—

Այս ամսուայ 1-ից մինչև 31-ը օրը պակասել է 2 ժ. 14 րոպէ։

---

ՍԵՊՏԵՄԲԵՐ.—Կշիռն. Այս համաստեղութեան տակ ծնուած տղան վիճասէր է, կամակոր, ծաղրաբան և սաստիկ իր բաւականութեանց նուէց ընկնող։ Ֆիզիքական գեղեցկութեան հետ ունի և լաւ ձևեր, ճառախօսութեան ձիրք, բարեհամբաւ է, միայն երբ իրա շահերը պահանջում են՝ իր տուած խոստումը շատ հեշտ է դրժում և իր ունեցած զգաստութեան շնորհիւ շատ վտանգներից հեշտութեամբ զերծ մնում։

Իսկ ծնուած աղջիկը սիրելի է, ուրախ, հրապուրիչ ձևերով օժըտուած, բախտաւոր և բազմաթիւ երկրպագուներ ունեցող. միայն

զգաստ պէտք է լինի, որովհետև վերջը անպատճառ զղջալու է։

Սեպտեմբերին ծնուածները առհասարակ ինչպէս 33 տարեկան հասակում, այնպէս էլ ջրից միշտ զգուշանալու են։



Օ Լ

# ՍԵՊՏԵՄԲԵՐ

## 30 ՕՐ

1 Ուր. ալ. Պահք։ Լատ. Խաչվերաց։ 19
2 Շբ. բյ. Ս. Առաքելոցն Յակովբայ և Շմաւօնի։ 20

☾ Վր. քռ. լս. Զօրաբնոցին եղ.

3 ✠ Կիր. բէ. Դ. Կիր. զկնի Վերափոխման։ 21
4 Բշ. գյ. Ս. Անդրէի զօրավարին և բանակի նորին, Կալինիկոսի և Դոմիտեայ վկայիցն։ 22
5 Գշ. գէ Ս. Անդրիանոսի և կնոջն նորա Անատօլայ, Թէոդորոսի և Ելևթերոսի վկայիցն։ 23
6 Դշ. դյ. Պահք։ 24
7 Եշ. դէ. Ս. Աբրահամու և Խորենայ անարծաթ բժշկացն, Կոզմայի, Դամիանոսի և Աստուածատ. վկային։ Յերեկոյեան նախատօն. 25
8 ✠ Ուր. ոյ. Պահք։ Տօն Ծննդեան Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՆ 'ի յԱննայէ. —Եւս Ռուսաց։ 26

| Օ | ՍԵՊՏԵՄԲԵՐ | Լ |
|---|---|---|
| 9 | Շբ. ակ. Տօն՝ Նիկիոյ Սուրբ Ժողովոյ 318 հայրապետացն։ | 27 |
| 10 | ✠ Կիր. բյ. Ե. Կիր. զկնի Վերափոխման։ Բարեկենդան Ս. Խաչի պահոց։ | 28 |
| 11 | Բշ. բկ. 1. օր Ս. Խաչի պահոց։ | 29 |
| | ☼ Արեգ. ի Կշիռն մտանէ 9 ժ. 22 րոպէ առաւ. Աշնանամուտ և հաւասարակաց—Տիւ և գիշեր հաւասար։ | |
| | ● Ծնունդն լուսնի. Վճիտ եղանակ։ | |
| 12 | Գշ. գյ. 2. օր Ս. Խաչի պահոց։ | 1 |
| 13 | Դշ. գկ. 3. օր Ս. Խաչի պահոց։ | 2 |
| 14 | Եշ. դյ. 4. օր Ս. Խաչի պահոց։ Ռուսաց՝ Խաչվերաց։ | 3 |
| 15 | Ուր. դկ. 5. օր Ս. Խաչի պահոց։ | 4 |
| 16 | Շբ. այ. Տօն Ս. եկեղեցւոյս ի Նաւակատիս Ս. Խաչին։ Նաւակատ. | 5 |
| 17 | ✠ Կիր. ակ. ԽԱՉՎԵՐԱՑ։ | 6 |
| 18 | ✠ Բշ. բյ. 2. օր. Տօն Ս. Խաչի։ Յիշատակ մեռելոց։ | 7 |

| Օ | ՍԵՊՏԵՄԲԵՐ | Լ |
|---|---|---|
| | Լատինաց՝ Տօն Ս. Գրիգորի Լուսաւորչին մերոյ ի սահմանս Հռոմայ և Նէապօլսոյ։ | |
| | ☽ Առ. քռ. լս. Փոփոխական եղան. | |
| 19 | Գշ. բկ 3. օր. Տօն Ս. եկեղեցւոյ։ | 8 |
| 20 | Դշ. գյ. 4. օր. Տօն Ս. եկ. Պահք։ | 9 |
| 21 | Եշ. գկ. 5. օր. Տօն Ս. եկեղեցւոյ։ | 10 |
| 22 | Ուր. դյ. 6. օր. Տօն Ս. Խաչի։ Պահք։ | 11 |
| 23 | Շբ. դկ. 7. օր. Տօն Ս. Խաչի։ | 12 |
| 24 | ✠ Կիր. այ. Բ. Կիր. զկնի Ս. Խաչի։ Բարեկենդան Վարագայ Ս. Խաչի։ | 13 |
| 25 | Բշ. ակ. Պահք։ Ս. Մամասայ, Փելիկտիմոնի և Սիմէոնի Սիւնակեցւոյն։ | 14 |
| | ○ Լրումն լուսնի. Անձրև. եղանակ։ | |
| 26 | Գշ. բյ. Պահք։ Ս. կուսանացն Փեփրոնեայ, Մարիանեայ և Շուշանայ դստեր մեծին Վարդանայ։ Ռուսաց՝ Ննջումն Ս. Յովհաննու Աւետարանչին։ | 15 |

Օ | ՍԵՊՏԵՄԲԵՐ | Ղ

9 Շբ. ալ. Տօն՝ Նիկիոյ Սուրբ Ժողովոյ 318 Հայրապետացն։ 27

10 ✠ Կիր. բյ. Ե. Կիր. զկնի Վերափոխման։ Բարեկենդան Ս. Խաչի պահոց։ 28

11 Բշ. բլ. 1. օր Ս. Խաչի պահոց։ 29

☼ Արեգ. ի Կշիռն մտանէ 9 ժ. 22 րոպէ առաւ. Աշնանամուտ և հաւասարակաց — Տիւ և գիշեր հաւասար։

● Ծնունդն լուսնի. Վճիտ եղանակ։

12 Գշ. գյ. 2. օր Ս. Խաչի պահոց։ 1

13 Դշ. գլ. 3. օր Ս. Խաչի պահոց։ 2

14 Եշ. դյ. 4. օր Ս. Խաչի պահոց։ 3
Ռուսաց՝ Խաչվերաց։

15 Ուր. դլ. 5. օր Ս. Խաչի պահոց։ 4

16 Շբ. այ. Տօն Ս. Եկեղեցւոյս ի Նաւակատիս Ս.Խաչին։ Նաւակատ. 5

17 ✠ Կիր. ալ. ԽԱՉՎԵՐԱՑ։ 6

18 ✠ Բշ. բյ. 2. օր. Տօն Ս. Խաչի։ Յիշատակ մեռելոց։ 7

Օ | ՍԵՊՏԵՄԲԵՐ | Ղ

Լատինաց՝ Տօն Ս. Գրիգորի Լուսաւորչին մերոյ ի սահմանս Հռոմայ և Նէապօլսոյ։

☽ Առ. քռ. լս. Փոփոխական եղան.

19 Գշ. բլ 3. օր. Տօն Ս. Եկեղեցւոյ։ 8

20 Դշ. գյ. 4. օր. Տօն Ս. Եկ. Պահք։ 9

21 Եշ. գլ. 5. օր. Տօն Ս. Եկեղեցւոյ։ 10

22 Ուր. դյ. 6. օր. Տօն Ս. Խաչի։ Պահք։ 11

23 Շբ. դլ. 7. օր. Տօն Ս. Խաչի։ 12

24 ✠ Կիր. այ. Բ. Կիր. զկնի Ս. Խաչի։ Բարեկենդան Վարագայ Ս. Խաչի։ 13

25 Բշ. ալ. Պահք։ Ս. Մամասայ, Փեղիկտիմոնի և Սիմէոնի Սիւնակեցւոյն։ 14

☉ Լրումն լուսնի. Անձրև. եղանակ։

26 Գշ. բյ. Պահք։ Ս. կուսանացն Փեփրոնեայ, Մարիանեայ և Շուշանայ դստեր մեծին Վարդանայ։ Ռուսաց՝ Ննջումն Ս. Յովհաննու Աւետարանչին։ 15

| Օ | ՍԵՊՏԵՄԲԵՐ | Լ |
|---|---|---|
| 27 | Դշ. Բկ. Պահք։ | 16 |
| 28 | Եշ. գկ. Պահք։ Ս. հայրապետացն Բարսղամու, Անթիմոսի և Երանոսի։ | 17 |
| 29 | Ուր. գկ.. Պահք։ | 18 |
| 30 | Շբ. դկ. Ս. Գէորգայ զօրավարին, Աղակտոսի և Ռոմանոսի երգեցողին։ Ռուսաց՝ Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ և Ս. կուսանացն Հռիփսիմեանց և Գայանեանց։ | 19 |

—

Այս ամսուայ 1-ից մինչև 30-ը օրը պակասել է 2 ժ. 14 րոպէ։



ՀՈԿՏԵՄԲԵՐ.—Կարիճն. Այս համաստեղութեան տակ ծնուած տղան համարձակ է և խորամանկ, բայց իր պակասութիւնները ծածկելով՝ իր արտաքին գեղեցկութեամբ խաբում է և շատերի աչքըն չլացնում։Օրիորդներ,այսպիսի կեղծաւորներին երբէք չհաւատաք. դոքա միայն երեսանց են ուրախ երևում, այդպիսիների ծիծաղը վնասակար է, աղէտաբեր և առանձնութեան ժամանակ դոքա մելամաղձութեամբ են տանջւում։

Իսկ ծնուած աղջիկը՝ աշխոյժով լի, ստասաց, ծածկամիտ, կեղծաւոր, դաւաճան, փոփոխամիտ և ագահ, սիրում է ծաղրել և ու-

րիչների մասին վատ կարծիք յայտնել։ Եւ չնայելով իր քաղցրանկատութեան և բարեհաճոյ ձևերին, իր սիրտը բարութեամբ չէ համակուած։

Հոկտեմբերին ծնուածները առհասարակ իրանց գործերում յաջողութիւն են գտնում և հարստութիւն են ձեռք բերում։ 41 տարեկան հասակումն է, որ թէ իրանց բնաւորութիւնն է փոխւում դէպի լաւը և թէ իրանց գործերի մէջ փոփոխութիւն է լինում։ Միայն 25 տարեկան հասակում հիւանդութիւններից զգուշանալու են։

Օ | Լ

# ՀՈԿՏԵՄԲԵՐ

## 31 ՕՐ

1 ✠ Կիր. դէ. Գ. Կիր. գիւտ Ս. Խաչի։ Տօն Վարագայ Ս. Խաչի։ 7-րդ Տարեդարձ Ս. Օծման Տ. Տ. Մկրտչի Ա. ամենայն Հայոց Կաթողիկոսի։ Չարասնիք։ 20
2 Բշ. այ. Ս. Դաւթի Դվնեցւոյն և Ս. վկայիցն Ղամբէոսի և Ղամբէռւհւոյն։ 21

☾ Վր. քռ. լուսնի. խոտն եղանակ։

3 Գշ. ակ. Ս. Եւստաթէոսի և կնոջ նորա Թէոփիստոսի և երկուց որդւոյն և կուսանացն Երմոնեայ և Նեքտաւինեայ։ 22
4 Դշ. բյ. Պահք։ 23
5 Եշ. բկ. Ս. իշխանացն Սահակայ և Համազասպայ։ 24
6 Ուր. գյ. Պահք։ 25
7 Շբ. գկ. Ս. Եօթանասունն և երկու աշակերտացն Քրիստոսի։ 26

| Օ | ՀՈԿՏԵՄԲԵՐ | Լ |
|---|---|---|
| 8 | ✠ Կիր. գյ. Դ. Կիր. զկնի Ս. Խաչի։ Հարսանիք։ | 27 |
| 9 | Բշ. գէ. Ս. Փոկասու հայրապետին և Երանոսի հետևողին Առաքելոցն։ | 28 |
| 10 | Գշ. դյ. Ս. կուսանացն Թեկղի. Վարվառեայ և Պեղագեայ։ | 29 |
| 11 | Դշ. դէ. Պահք։ | 30 |
| | ◉ Ծնունդ լս. Ժամը 4 և 45 վայրկեան։ | |
| | ☼ Արեգակն ի Կարիճն մտանէ։ | |
| 12 | Եշ. եյ. Ս. Պանտալէոնի բժշկին, Երմողեայ քահանային և Եւսերակոսեայ կուսին։ | 1 |
| 13 | Ուր. եէ. Պահք։ | 2 |
| 14 | Շբ. զյ. Ս. Թարգմանչաց վարդապետացն մերոց Մեսրովպայ, Եղիշէի, Մովսէսի քերթողին, Դաւթի անյաղթ—փիլիսոփային, Գրիգորի Նարեկացւոյն և Ներսեսի Կլայեցւոյն։ | 3 |
| 15 | ✠ Կիր. զէ. Ե. Կիր. զկնի Ս. Խաչի։ Հարսանիք։ | 4 |
| 16 | Բշ. ըյ. Գիւտ նշխարաց Ս. | 5 |

| Օ | ՀՈԿՏԵՄԲԵՐ | Ն |
|---|---|---|
| | Գրիգորիսի Աղուանից կաթողիկոսի, և Սրբոց հարցն Թաթլոյ, Վարոսի և Թումասու, Անտոնի և Կրօնիդեայ և եօթն խոստովանողացն՝ որք Ց'իննակնեայ վանսն կատարեցան։ | |
| 17 | Գշ. ըէ. Ս. Առաքելոցն, Անանիայի, Մատթէի, Բառնաբայ, Փիլիպպոսի, Յովհաննու, Շիղայի և Սիղիանոսի։ | 6 |
| 18 | Դշ. թյ. Պահք։ | 7 |
| | ☽ Առ. քա. լս. Առաջին օրը եղ. | |
| 19 | Եշ. թէ. Ս. Դիոնէսիոսի Արիսպագացւոյն, և Առաքելոցն Տիմոթէոսի և Տիտոսի։ | 8 |
| 20 | Ուր. ժյ. Պահք։ | 9 |
| 21 | Շբ. ժէ. Ս. Աւետարանչացն, Մատթէոսի, Մարկոսի, Ղուկասու և Յովհաննու։ | 10 |
| 22 | ✠ Կիր. ժայ. Զ. Կիր. զկնի Ս. Խաչի։ Հարսանիք։ Ռուսաց՝ տօն Ղազանու Ս. Աստուածածնայ պատկերին։ | 11 |
| 23 | Բշ. ժաէ. Ս. Ղուկիանոսի հաբիւ- | 12 |

ՆՈՅԵՄԲԵՐ.—Աղեղնաւորն. Այս համաստեղութեան տակ ծընուած տղան քաջ է և արի, խելօք, բարեկամներ շատ գտնող, առողջակազմ, ճշմարտասէր, հաստատամիտ, վարուեցող, աշխատասէր, բնականապէս բարեպաշտ, սրտով ուրախ, բարի և իր ունեցած լաւ յատկութիւնների համեմատ՝ անչափ ինքնասէր։

Իսկ ծնուած աղջիկը՝ գործունեայ և աչալուրջ, աշխատասէր, բարեպաշտ, բարի և սրտով ուրախ։ Գլխաւոր պակասութիւնը իր կասկածոտ բնաւորութիւնն է։

Նոյեմբերին ծնուածները առհասարակ արդիւնաբերութեան մէջ բախտաւոր են լինում և միջին տարիքում կարողութեան տէր։ 33 տարեկան հասակում հիւանդանալուց զգուշանալու են և իրանց չափաւոր ու ժուժկալ կեանքով մինչև խորին ծերութեանը հասնող։



Օ | Լ

# ՆՈՅԵՄԲԵՐ
## 30 ՕՐ

1 Դշ. Աձ. Պահք: 21

☾ Վր. քռ. լս. Փոփոխումն եղ.

2 Եշ. Ակ. Ս. Յովհաննու Ոսկեբե- 22
րան հայրապետին:
3 Ուր. Բձ. Պահք: 23
4 Շբ. Բկ. Տօն ամենայն սրբոց— 24
Հնոց և Նորոց, յայտնից և անյայ-
տից:
5 ✠ Կիր. Գձ. Ը. Կիր. գիւտ Ս. Խաչի: 25
Հարսանիք:
6 Բշ. Գկ. Ս. Ստեփաննոսի Հռոմայ 26
հայրապետին և քահանայից,
սարկաւագաց և ժողովրդոց:
7 Գշ. Դձ. Ս. Աղեքսիմեայ եպիսկ. 27
Յովսեփայ քահ. Ալիթալայ սար-
կաւագին և Պղատոնի վկային:
8 Դշ. Դկ. Պահք: Ծն. Ս. Ածածնի. 28
9 Եշ. Աձ. Ս. Հայրապետացն Մետ- 29
րոփանոսի, Աղէքսանդրոսի, Պօ-
ղոսի խոստովանողին և Ս. Նոտա-

---

Օ | ՆՈՅԵՄԲԵՐ | Լ

րացն՝ Մարկիանոսի և Մարտի-
րոսի:

☺ Ծնունդն լուսնի. Պարզկոյ:

10 Ուր. Ակ. Պահք: Յերեկ. Նախատ. 1

☼ Արեգ. ի Աղեղնաւորն մտանէ:

11 Շբ. Բձ. Ս. Հրեշտակապետացն 2
Գաբրիէլի և Միքայէլի և ամե-
նայն երկնային զօրացն:
12 ✠ Կիր. Բկ. Թ. Կիր. գիւտ Ս. Խաչի: 3
Հարսանիք:
13 Բշ. Գձ. Ս. Մելիտոսի Անտիոքայ 4
հայրապետին և Մինասայ եգիպ-
տացւոյն և միւս Մելիտոսի եպ.
Բուրայ քահանային և Շենու
սարկաւագին:
14 Գշ. Գկ. Ս. Դիմետրեայ վկային 5
և Բասիլիկոսի քահանային:
Յունաց և Ռուսաց՝ բարեկենդան
Ծննդեան պահոց:
15 Դշ. Դձ. Պահք: 6
16 Եշ. Դկ. Ս. Գուրիասայ, Սամու- 7
նասայ, Աբիբայ սարկաւագին,

Օ | ՆՈՅԵՄԲԵՐ | Ն

Ռոմանոսի միայնակեցին, Մանկանն-խոստովանողի և Հիւսիքոսի զինուորին։

◐ Առ. քա. լուսնի. Խառն եղանակ։

17 Ուր. գջ. Պահք։ 8
18 Շբ. գկ. Ս. Առաքելոյն Անդրէի և Փիլիպպոսի։ 9
19 ✠ Կիր. դջ. Ժ. Կիր. զկնի Ս. Խաչի։ Բարեկենդան Յիսնակի պահոց։ 10
20 Բշ. դկ. 1. օր Յիսնակի պահոց։ Յերեկոյեան նախատօնակ։ 11
21 ✠ Գշ. եջ. 2. օր Յիսնակի պահոց։ ԸՆԾԱՅՈՒՄՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ի Տաճարն.—Եւս 3 և Ռուսաց։ 12
22 Դշ. եկ. 3. օր Յիսնակի պահոց։ 13
23 Եշ. զջ. 4. օր Յիսնակի պահոց։ 14

◯ Լրումն լուսնի. Սառն եղանակ։

24 Ուր. զկ. 5. օր Յիսնակի պահոց։ 15
25 Շբ. էջ. Ս. Գրիգորի Սքանչելագործին. Նիկողայոսի հայրապետին և Միւռոնայ եպիսկոպոսին։ 16
26 ✠ Կիր. էկ. Ա. Կիր. Յիսնակի։ 17

Օ | ՆՈՅԵՄԲԵՐ | Ն

Հարսանիք։ Ռուսաց՝ և Յունաց Ս. Գէորգ։ Լատինաց՝ Յղութիւն Ս. Աստուածածնի ի Աննայէ։
27 Բշ. ըջ. Ս. կուսանացն Յուլիանեայ և Վասիլուհւոյ։ 18
28 Գշ. ըկ. Ս. Ղուկիանոսի քահանային և Տարագրոսի, Պրոպոսի, Անդրոնիկոսի, Ոնեսիմեայ և այլոց աշակերտացն Պօղոսի։ 19
29 Դշ. թջ. Պահք։ 20
30 Եշ. թկ. Ս. Կղեմայ հայրապետին և Բագարատայ Տաւրոմենայ եպիսկոպոսին։ 21

◑ Վր. քա. լս. Ցրտաշունչ եղանակ։

—

Այս ամսուայ 1-ից մինչև 30-ը օրը պակասել է 1 ժ. 19 րոպէ։

Դ Ե Կ Տ Ե Մ Բ Ե Ր. — Այծեղջիւրն. Այս համաստեղութեան տակ ծընուած տղան թէև այնքան բախտաւոր չի լինի և ձախորդութիւններ շատ կ՚քաշէ, բայց ճշմարտասէր, թեթևամիտ, եռանդոտ, չար, ագահ և անբարիշտ կլինի: Իրան մասին մեծ համարում ունի. թէև համեստ է երևում, սակայն դա միայն արտաքին կողմից է և կեղծ. որովհետև իր ամեն բաւականութեանց սիրահար է:

Իսկ ծնուած աղջիկը՝ արթուն, թեթևամիտ, ջահիլ ժամանակը վերին աստիճանի ամօթխած, սակայն վերջը համարձակ և շատ խառնակիչ. պսակուած ժամանակ

ևս խանդոտ՝ թէև այս պակասութիւնները միշտ աշխատում է ծածկել: Եթէ չափաւոր և զգոյշ լինի, մինչև խորին ծերութիւնը կհասնի:

Դեկտեմբերին ծնուածները, առհասարակ իրանց գործերում խելօք են և խորհրդների մէջ զգոյշ. սիրում են գիտութիւններ և միշտ հակուած են դէպի ճանապարհորդութեան: Առևտրից օգտուող, իսկ շինութիւններից վնասուող: Պէտք է միայն 25 տարեկան հասակում հիւանդանալուց զգուշանան:

---

| Օ | | Ն |
|---|---|---|

# ԴԵԿՏԵՄԲԵՐ

## 31 ՕՐ

1 Ուր. ժէ. Պահք: Ցերեկ. Նախատ. 22
2 ✠ Շբ. ժզ. Ս. Առաքելոց և առաջին Լուսաւորչացն մերոց ԹԱԴԷՈՍԻ և ԲԱՐԴՈՒՂԻՄԷՈՍԻ: 23
3 ✠ Կիր. ժը. Բ. Կիր. զկնի Յիսնակի: Հարսանիք. 24
4 Բշ. ժթ. Ս. Գենարիոսի եպիսկոպոսին և Մերկերիոսի զինուորին Յակոբայ և Իրաւափառայ: 25
5 Գշ. ի. Ս. ԱԲԳԱՐՈՒ Նախավկայ և անդրանիկ Թագաւորին Մերոյ: 26
6 Դշ. իա. Պահք: Ուսոաց' Ս. Նիկողայոսի Սքանչելագործին: 27
7 Եշ. իբ. Ս. հարցն Եգիպտացւոցն, Պօղոսի, Պօղայ, Մակարայ, Եւագրի, Յովհաննու Գբնեցւոյն, Յովհաննու կարճահասակին, Նեղոսի, Արսէնի, Սիսիանու, Դանիէլի, Սրապիոնի, Մակարիոսի, Պիմէնի և այլոց ս. հարցն: 28

| Օ | ԴԵԿՏԵՄԲԵՐ | Ն |
|---|---|---|

8 Ուր. իգ. Պահք: Ցերեկ. Նախատ. 29
9 ✠ Շբ. իդ. ՏՕՆ ՅՂՈՒԹԵԱՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ Ի ՅԱՆՆԱՅԷ: 1

☾ Ծն. լուսնի. Փոփոխական եղանակ:

10 ✠ Կիր. իե. Գ. Կիր. զկնի Յիսնակի: Բարեկենդան Ս. Յակոբայ պահոց: 2

☼ Արեգ. 'ի Այծեղջիւրն մտանէ 12 ժամ 0 ր. երեկ. Ձմեռնամուտ և արեւադարձ—ցերեկն սկսանի երկարել—գիշերն կարճանալ:

11 Բշ. իզ. Պահք Ս. Մինասայ, Երմոգինեայ և Գրաբոսի, և կամաւոր աղքատացն Յովհաննու և Աղեքսիանոսի: 3
12 Գշ. Պահք: իէ. Ս. Կոռնելիոսի հայրապետին և Շմաւոնի ազգականին Քրիստոսի, որ խաչեցաւ յԵրուսաղէմ, Պողիկարպոսի հայրապետին Զմիւռնիոյ և Ս. վկայիցն, որք յԱրեւելս կատարեցան: Լատինաց' Ծննդեան Տեառն. 4
13 Դշ. իը. Պահք: 5

| Օ | ԴԵԿՏԵՄԲԵՐ | Լ |
|---|---|---|
| 14 | Եշ. ժէ. Պահք: Ս. Եւստրատիոսի, Օգսենտիոսի, Եւգենիոսի, Ովրեստէսի և Մարդարիոսի: | 6 |
| 15 | Ուր. ժը. Պահք: Յերեկ. Նախատ. | 7 |
| 16 | Շբ. ժթ. Ս. Յակոբայ Մծբնայ Հայրապետին, Մարուդէի Ճգնաւորին և Մելիտոսի եպիսկոպոսին: | 8 |
| | ☾ Առ. քռ. լուսնի Ձմեռնային: | |
| 17 | ✠ Կիր. ի. Դ. Կիր. զկնի Յիսնակի: | 9 |
| 18 | Բշ. իա. Ս. Հայրապետացն Իգնատիոսի, Աղդէի և Մարութայ եպիսկոպոսին: | 10 |
| 19 | Գշ. իբ. Ս. Թէոպոմպայ եպիսկոպոսին, Թէոփնայ վկային և չորեց զինուորացն, Բասոսի, Եւսեբի, Եւտիքի, և Բասիլիդեայ: Լատինաց՝ տօն Տնօրէնութեան Տեառն — ըստ նոր տօմարին՝ Յունուար և տարեմուտ 1901 Թ. | 11 |
| 20 | Դշ. իգ. Պահք: | 12 |
| 21 | Եշ. իդ. Ս. Կուսանացն Ինդոսի, Դոմնի և Գլիկերիոսի քահանային և երկուց Թէոփոյն, որք այրեցան յեկեղ. Նիկոմիդ-ացւոց: | 13 |

| Օ | ԴԵԿՏԵՄԲԵՐ | Լ |
|---|---|---|
| 22 | Ուր. իե. Պահք: Յերեկ. Նախատ. | 14 |
| 23 | Շբ. իզ. Ս. Դաւթի մարգարէին և Յակովբայ Առաքելոյն: | 15 |
| | ☺ Լրումն լս. Խոնաւ եղանակ: | |
| 24 | ✠ Կիր. իէ. Ե. Կիր. զկնի Յիսնակի: Հարսանիք Յերեկ. Նախատ. Յ. Ռ. Ճրագալոյց Ծննդեան: Լատինաց՝ Յայտնութ.ն Տեառն: | 16 |
| 25 | Բշ. իը. Ս. Ստեփաննոսի Նախավկային և առաջին մարտիրոսին: Հանդիսաւոր օր ուխտի Ս. Ստեփաննոս եկեղ. Տփխիսայ՝ որ է յանապատին կուսանաց՝ ուր և ամփոփի մաս նշխարաց—աջ Ս. Ստեփաննոսի: Յ. և Ռուսաց՝ Ծնունդ—Տեառն: | 17 |
| 26 | Գշ. իթ. Ս. Առաքելոցն Պետրոսի և Պօղոսի: Ռուսաց՝ երկրորդ օր Ծննդեան: | 18 |
| 27 | Դշ. լ. Պահք: Յերեկ. Նախատ. | 19 |

| Օ | ԴԵԿՏԵՄԲԵՐ | Լ |
|---|---|---|
| | Ռուսաց՝ Երրորդ օր Ծննդեան։ | |
| 28 | Եշ. դէ. Ս. որդւոցն Որոտման Յակոբայ առաքելոյն և Յովհաննու աւետարանչին։ Բարեկենդան Ծննդեան պահոց։ | 20 |
| 29 | Ուր. տժ. պահք։ | 21 |
| 30 | Շբ. ակ. 1 օր Ծննդեան պահոց։ Ս. Բարսեղի հայրապետին և Եղբօր Նորին Գրիգորի Նիւսացւոյն. Սեղբեստրոսի Հռովմայ հայրապետին և Աբբայ Եփրեմի Խորին Ասորւոյ։ | 22 |
| | ☾ Վր. քռ. լուսին Փոփոխական եղ. | |
| 31 | ✠ Կիր. թյ. 2 օր Ծննդ. պահոց. Զ. Կիր. զկնի Յիսնակի։ | 23 |
| | Այս ամսուայ 1-էց մինչև 31 օրը աւելացել ժ. 27 րոպէ։ | |



## ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Եթէ շատ անգամ եղանակի գուշակութիւնները չեն կատարւում, այդ պատահում է երկրի աշխարհագրական դիրքից և օդերևութաբանական զանազան պատճառներից, համանաւանդ, պարբերաբար որոշ ուղղութեամբ փչող հովերի, ցիկլօնների և երկրիս մթնոլորտի յեղաշրջման (пертурбацiи) ժամանակ։

Ծ. Ալ.

# ՅԱՒԵԼՈՒԱԾ

## Մ. ՉՄՇԿԵԱՆԻ «ԾՈՑԻ-ՕՐԱՑՈՅՑԻ» 1900 Թ.

### I. ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

—

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ Հայրապետ և Կաթողիկոս ամենայն հայոց Տ. Տ. ՄԿՐՏԻՉ Ա. ընտրեալ մայիսի 5-ին 1892 Թ. և օծեալ սեպտեմբերի 26-ին 1893 Թ.

1) ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ.

ա) ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ—(Թափուր)։

բ) ԱՂԹԱՄԱՐԱՅ—(Թափուր)։

2) ՊԱՏՐԻԱՐՔՆԵՐ.

ա) ԵՐՈՒՍԱՂԵՄԱՅ—Յարութիւն արքեպիսկոպոս Վեհապետեան։

բ) Կ. ՊՕԼՍՈՅ—Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան։



3) Ս. Էջմիածնի Սինոդոս.

Նախանդամ՝ Արիստակէս արքեպիսկոպոս Դաւթեան։

Անդամք՝ Եսայի արքեպիսկոպոս Աստուածատրեան։

» Աշոտ վարդապետ Շախեան։

» Յուսիկ վրդ. Տէր-Մովսիսեան։

Պրօկուրօր Խրիստ. Կանչելի։

4) ԹԵՄԵՐ ԵՒ ԹԵՄԱԿԱԼՆԵՐ.

ա) ԵՐԵՒԱՆԻ. Փոխանորդ Թեմակալ Առաջնորդի՝ (Թափուր)։

Տաթեւի.—Յաջորդ Թովմա վարդապ.

Հին-Նախիջևանի—Յաջորդ Սիոն վրդ. Տէր-Մանուէլեան։

Ղարսի յաջորդ—Եղիշէ վրդ. Մուրադեան։

Ալէքսանդրապօլու յաջորդ—Եփրեմ վրդ. Տէր-Մկրտչեան։

բ) ՎՐԱՍՏԱՆԻ և ԻՄԵՐԷԹԻ Թե.

մական առաջնորդ Գէորգ արքեպիսկոպոս Սուրէնեանց։

Գանձակու յաջորդ.—Բագրատ վրդ. Թաւաքալեան։

Ախալցխայի յաջորդ.—Պետրոս վարդ. Այվազեանց։

Կարսու յաջորդ.—Սահակ վրդ. Տէր-Միքայէլեան։

գ) ՂԱՐԱԲԱՂԻ.—Կառավարիչ Թեմի (Թափուր)։

Նուխու յաջորդ.—Սահակ վրդ. Բաղդասարեան։

դ) ՀԱՇՏԱՐԽԱՆԻ.—Թեմական Առաջ. Ներսէս արքեպիսկ. Սեդրակեան։

ե) ՇԱՄԱԽՈՒ.—Կառավարիչ Թեմի (Թափուր)։

զ) ԲԵՍԱՐԱԲԻՈՅ Կառավարիչ Թեմի— Ներսէս արքեպիսկ. Խուդավերդեանց։

է) ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ՝ Կառավարիչ Թեմի Սահակ եպիսկ. Այվատեան։

ը) ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ և Հնդկաստանի Թեմական Առաջ. Մաղաքիա եպիսկոպ. Տէրունեան։



# II. ԱՍՏՂԱԳԻՏԱԿԱՆ

—

## ԱՐԵՒԻ ԵՒ ԼՈՒՍՆԻ ԽԱՒԱՐՈՒՄՆԵՐԸ։

Այս 1900 թուին 2 անգամ արևի և մէկ անգամ լուսնի խաւարումներ կը նկատուին, որոնցից 1) Արեւինը (մասնաւոր) մայիսի 15-ին, սկիզբը 5 ժ. 43 ր. երեկ. վերջը 7 ժ. 9 ր. առ.

2) Մասնաւոր խաւարումն լուսնի մայիսի 31-ին, սկիզբը 5 ժ. 54 ր. առ. վերջը 6 ժ. 4 ր. առաւօտեան։

3) Մանեկաւոր խաւարումն արևի նոյեմբ. 9-ին, սկիզբը 6 ժ. 40 ր. առ. վերջը 12 ժ. 50 ր. առաւ.

Այս խաւարումներից՝ մայիսի 15-ին միայն տեսանելի կը լինի Կովկասում, այն էլ շատ թեթև։

—

## III. ՕԴԵՐԵՒՈՅԹԱԲԱՆԱԿԱՆ

Առաջիկայ 1900 թ. Էֆի-մերդէի գուշակութիւնը.

—Այս տարին առհասակ առատ և պարարտ կլինի. պտուղ, մետաքս, ձէթ, միս և ձուկն շատ: Ամբողջ տարին առողջ և յաջող կանցնի: Ձմեռն՝ բարեխառն: Գարունն խոնաւ: Ամառն և աշունը քամոտ: Ոչխարի, մեղրի և ընդեղէնների առատութիւն: Պարտէզների պըտուղները կ'փչանան. իսկ երեխաներին՝ կոտորած: Մարդիկ իրանց կկորցնեն, գողեր շատ կ'յայտնուեն: Հրատի երկնքի տասներ-



կուերորդ և Արեգակի իններորդ տան մէջ գտնուիլը և Վիշապ համաստեղութեան վրայ հակուած լինելը, ցոյց է տալիս զինուորների միմեանց մէջ տեղի ունեցող խռովութիւնները, սրով և թրով ընկնելը, փոքրերի և մեծերի մահը. մի թագաւորի յայտնի ճանապարհի գրաւելը. Նոր թագաւորների երևալը և նոցա բռնութեամբ իշխել ու տիրելը: Լուսաբերի և Փայլածուի դիրքն ևս նշան է՝ ցաւի, նեղութեան, վշտի և այլ վնասների, ինչպէս ժողովրդի թագաւորից վնաս կրելուն, այնպէս էլ թագաւորին վնաս հասնելը:

Տանուտէրի Ջուկն լինելովն ևս

գուշակում է կենդանիների կոտորած, փորացաւ, ծովերում փոթորիկ, տեղ-տեղ պատերազմներ, Արեւելքում խաղաղութիւն, շատ ազգերի իրար խառնուիլ և Հռովմայեցոց երկրի կողմերում պատերազմներ ու ընդհարում։





# IV. ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ

Յանցաւորների աչքերի գոյնը.—Պետերբուրգի գանգաչափական ինստիտուտի պրոֆ. Կարլովը քննեց այն հարցը, թէ յանցաւորների աչքերի գոյնից կարելի՞ է արդեօք որոշել յանցագործութեան տեսակը և երեւայ որ ամեն մի տեսակ յանցաւոր ունի և իր աչքերի առանձին գոյնը.—օրինակ մարդասպանների և գողերի աչքերի գոյնը շագանակագոյն է, իրանց հաւատարմութիւնն է չարն գործ դնողներինը—կինամոնագոյն, շրջմոլիկներինը (բրոդեագա)—կապտագոյն է։ Սև և խաժակ (գալուբօյի) աչք ունեցողների մէջ յանցաւորներ շատ քիչ կան։

Բաղդաւոր ամուսնութեան օրացոյց.—Ֆրանսիական մի քանի գիտնական հետախոյզների կարծիքով՝ ամուսնութեան համար գոյութիւն ունին թէ բաղդաւոր և թէ անբաղդ օրեր։ Նրանց գիտողութիւնների համաձայն, ամենից աւելի բաղդաւոր և հաճելի օրեր պէտք է համարել՝

Յունուարի 1, 3, 10, 19 և 21-ը,
Փետրուարի 1, 3, 10, 10, 21.
Մարտի 3, 5, 12, 20, 23.
Ապրիլ 2, 4, 12, 20, 22.
Մայիսի 2, 4, 12, 20, 23.
Յունիսի 1, 3, 11, 13 19 և 21.
Յուլիսի 1, 3, 12, 19 և 21.
Օգոստոսի 2, 11, 18, 20, 30.
Սեպտեմբ. 1, 9, 16, 23, 28.
Հոկտեմբ. 1, 8, 15, 17, 27 և 29.
Նոյեմբերի 5, 11, 13, 22, և 25.
Դեկտեմբ. 1, 8, 10, 19, 23 և 29։



## V. ԻՄԱՍՏՆԵՐ

Գեղեցիկ է երեկոն, եթէ մարդ ցերեկն անց է կացրել առաքինութեան մէջ։

Գեղեցիկ է ծերութիւնը, եթէ ոչինչ չէ ապականել մանկութիւնը։

Ամենաազնիւ զարդարանքը պարզութիւնն է։

Մարդուս առաջին առաքինութիւնը՝ իր անձը հայրենիքին զոհելն է։

Հայրենիքի համար մեռնելը՝ նշանակում է մի գեղեցիկ մահով իրան անմահացնել։

Հայրենիքի ծուխն անգամ ճըշ-

**Բաղդաւոր ամուսնութեան օրացոյց.**—Ֆրանսիական մի քանի գիտնական հետախոյզների կարծիքով ամուսնութեան համար գոյութիւն ունին թէ բաղդաւոր և թէ անբաղդ օրեր։ Նրանց դիտողութիւնների համաձայն, ամենից աւելի բաղդաւոր և հաճելի օրեր պէտք է համարել՝

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Յունուարի | 1, | 3, | 10, | 19 | և | 21-ը, |
| Փետրուարի | 1, | 3, | 10, | 10 | , | 21. |
| Մարտի | 3, | 5, | 12, | 20 | , | 23. |
| Ապրիլ | 2, | 4, | 12, | 20 | , | 22. |
| Մայիսի | 2, | 4, | 12, | 20 | , | 23. |
| Յունիսի | 1, | 3, | 11, | 13 | 19 | և 21. |
| Յուլիսի | 1, | 3, | 12, | 19 | և | 21. |
| Օգոստոսի | 2, | 11, | 18, | 20 | , | 30. |
| Սեպտեմբ. | 1, | 9, | 16, | 23 | , | 28. |
| Հոկտեմբ. | 1, | 8, | 15, | 17, | 27 | և 29. |
| Նոյեմբերի | 5, | 11, | 13, | 22, | և | 25. |
| Դեկտեմբ. | 1, | 8, | 10, | 19, | 23 | և 29։ |

---



# V. ԻՄԱՍՏՆԵՐ

Գեղեցիկ է երեկոն, եթէ մարդ ցերեկն անց է կացրել առաքինութեան մէջ։

Գեղեցիկ է ծերութիւնը, եթէ ոչինչ չէ ապականել մանկութիւնը։

Ամենաազնիւ զարդարանքը պարզութիւնն է։

Մարդուս առաջին առաքինութիւնը՝ իր անձը հայրենիքին զոհելն է։

Հայրենիքի համար մեռնելը՝ նշանակում է մի գեղեցիկ մահով իրան անմահացնել։

Հայրենիքի ծուխն անգամ ճըշ-

մարիտ հայրենասէրին քաղցր և ախորժելի է թւում։

Որդին շատ պարտք ունի վճարելու ծնողներին՝ նոցա իր գոյութեան ՝սկզբնապատճառը լինելու համար. բայց աւելի հայրենիքին՝ որի համար ծնւում է։

Հայրենասիրութիւնը այնպիսի մի տենդ է, որ իւր ցնցումների միջոցին յաղթում է բնութեանը։

Ոչինչ բան՝ այնքան քաղցր չէ, որքան հայրենիքի սէրը։

Ոչինչ բան փափագելի չէ, որքան հայրենիքում ապրել և մեռնելը։

Ոչինչ բան այնքան հաւատա-



րիմ բարեկամ չէ մեզ, որչափ լաւ գրքերը։

Ուսումն մի անհրաժեշտ պահանջ է, սակայն նրա բանալին աշխատասիրութիւնն է։

Շատերը ցանկանում են ամեն բան գիտենալ, բայց քչերն են, որ կամենում են սովորել։

Ամենավատթար բռնակալը երես տուած երեխան է։

Ամենաբաղդաւորը նա է, ով ի- իրա դրութիւնից գոհ է։

Միայնութիւնն աշխատողի համար բարիք է, անգործի համար տանջանք։

Բարեբարի մահուան համար աւելի ափսոսում են՝ քան ցաւում։

Մարդիկ անցեալը մոռանալով են ապրում։

Ամէն բանում ծայրահեղ չափազանցութիւններից զգուշացիր։

Բժիշկների յանցանքը մեծ մասամբ հողով է ծածկւում։

Գինետան մէջ մեծացող գինեմոլը հիւանդանոցումն է մեռնում։

Մտերմութիւնը նուազում է, երբ մէկը երջանիկ է, իսկ միւսը տարաբաղդ։

Իսկական երջանկութիւնը գոհունակութեան մէջ է։

Բարեկամդ կ՚տայ իր աւելցածից, իսկ պարտաճանաչ կինդ՝ սրտիցը։

Սիրտն աւելի շուտ է եփւում



քար կտրւում հարստութեան մէջ, քան ձուն եռացող ջրում։

Ուրիշներին միշտ ներեցէք, իսկ ձեզ ոչ երբէք։

Սիրահարուածը—կաթ է, նշանուածը—իւղ, իսկ կինը—թան։

Կանանց կորստեան պատճառը՝ մեծամտութիւնն է։

Մի որեւէ մարդու պատժելու համար նրան, անզգամ կնոջ հետ կապիր. այդ բաւական է նրան մինչև իր կեանքի վերջը։

---

## VI. ՏԱՆՏԻԿԻՆ

—

—Բորբոսնելու դէմ.—Այն պահարաններում, որտեղ վտանգ կայ բորբոսնելուց, պէտք է հոտաւէտ մի որևէ հեղուկ պահել բաց ամանով. սկիպիտարը աւելի լաւ է ներգործում։

—Կօշիկները դիմացկուն անելու համար՝ երբէք չպէտք է հագնել, մինչև որ բևեկնոյ (терпентинъ) իւղով չ'հարուի։ Բարակ կաշուց պատրաստուած կօշիկները իրանց գոյնը և փափկութիւնը երկար ժամանակ պահում են, եթէ մի քանի անգամ ձուի դեղնուց քսուի։ Տղամարդկանց



կօշիկների պնդութիւնը պահպանելու և խոնաւութիւնը չթափանցելու համար պէտք է ձկան իւղ կամ տիզականէփի (касторовое масло) քսել. իսկ ներբանների տակին վուշի իւղով սերտ հարել։

—

—Ջահիլ տանտիկիններին անհրաժեշտ խորհուրդ.—Ձեռքերի կարծրութեան և չորութեան դէմ կիտրոնի հիւթ գործածելու է։

—Այն ամաններում, որոնց մէջ իւղ կամ ճրագու է եղել՝ վարունգներ չի կարելի աղ դնել—կ'փչանան։

—Մեղրամոմը ճրաքուի հետ

խառնած եռացած արդուկին (утюгъ) քսելով՝ գործը փայլուն և ողորկ է չինւում։

—Ձուկը հեշտ է մաքրւում՝ եթէ մի րոպէ տաք ջրի մէջ պահուի։

—Պինդ միսը փափկանում է՝ եթէ այն ջրի մէջ, որի մէջ եփւում է՝ մի քիչ քացախ խառնուի։

—Կաթնապուրի և ուրիշ սպիտակագոյն կերակուրների աղը վերջը պէտք է խառնել, որպէսզի կերակուրի գոյնը չ՛փոխուի։

—Անձրևի սառը ջուրը մի փոքըր մաս սօդայի հետ խառնած՝ մաքրում է այն ամեն կտորները, որոնք կարելի է լուանալ։

—Տոմաթէսներից (հասածները) քամած ջրով ձեռքերի և սպիտակեղէնների բծերը անհետանում են։

---



## VII. ԳԻՒՏ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ

---

Ո տ ո վ  ճ ա ն ա պ ա ր հ ո ր դ ո ւ թ ի ւ ն  ծ ո վ ի  վ ր ա յ.—Ոմն միստեր Օլ'Դրիւ պատրաստւում է Բոստոնից Ատլանտեան ովկիանոսի վրայով անցնել դէպի Հաւր։ Նա այդ բանի համար հնարել է ջրագնաց կօշիկներ, որոնք ունին $1^1/_2$ մետր բարձրութիւն և չինուած են կաշուց ու փայտից։ Կօշիկների կողքերից ամրացրած են առանձին շարժական թիակներ, որոնք պահպանելու են ոտաւորին՝ ջրի երեսին։ Կօշիկների տակը եղենու փայտից է, որ ծնկների մօտ ամրանում է կաուչուկէ կապերով.

սրանք պահպանելու են կօշիկնե-րը ջուր ծծելուց։ Միստեր Օ՛-դրլիւի ճանապարհորդական շորերը նոյնպէս ջուր չ՛ծծող կաուչուկէ տրիկոյից են լինելու։ Խիզախ ճա-նապարհորդին ուղեկցելու է իւր բարեկամ միստեր Անդրը մի ա-ռագաստաւոր նաւով։ Կարծում են, որ նա Բոստոնից մինչև Հաւր ե-ղած տարածութիւնը, որ 4800 կի-լոմետր է, կանցնի 105—110 օ-րում։ Այս ջրային ճանապարհոր-դութիւնը սկսուելու է մայիսի սկզբին։

---



## VIII. ԲԺՇԿԱԿԱՆ

---

Ոտնառութեամբ Բթացաւով (Подагра) հիւանդներին երկաթու-ղիով ճանապարհորդելը առհասա-րակ բուժարար ազդեցութիւն է ա-նում։ Եւ իրօք այդպիսի հիւանդ-ները, ինչպէս վկայում է անգլիացի բժշկի մէկը-մի օր երկաթուղով ճանապարհորդելուց յետոյ շատ թեթևութիւն են զգում։ Այս հան-ջամանքը աչքի առաջ ունենալով, վերոյիշեալ բժիշկը այնպիսի մի ախոռ է հնարել, որ պէտք է միշտ սածելու և չարժողութեան մէջ լինի։ Այդ աթոռի վրայ նստողը եթ՝ առողջ սարդ է սիրտն է խառ-

նում, իսկ եթէ ոտնառութեամբ հիւանդ, կարճ ժամանակից յետոյ իր ցաւերից թեթեւանում է, ախորժակը բացւում և հանգիստ քնում։

—

**Կազմուածքը պնդացնելու համար.**—պէտք է 15 դոյլ (վեդրօ) գետի ջուր վերցնել և մէջն խառնել, տասն գրուանքայ պղնձի խարտուցք, երկու գրվան. մաքրած ծծումբ, երկու գրվ. բօրակ (селитра) և կէս գրվ. արջասպ (սապօժնի կուպարոս)։ Այս բոլոր կէս ժամ շարունակ խառնելու և պարզեցնելուց յետոյ, որպէս սառն լողարան, գործածելու է։



**Ոտքերի յոգնելու դէմ.** —տաշտումածած գոլ ջրին, մի քիչ ծեծած չիր խառնել, որի մէջ ոտքերը պէտք է այնպէս դարսել, որ միայն եղունգները չոր մնան և այդպէս 10—15 րոպէ պահել։

—

**Ջրգողութեամբ**—(վօդեանկայ) հիւանդներին կծոխուրի (բարբարիս) տերևներից պատրաստած թմրոցը լաւ է օգնում։

—

**Լերդի** (պեչենի) **հիւանդութեամբ** տանջուողներին օգտակար է օրը երկու անգամ 20—30 րոպէ շարունակ, սերտ աղաջրով

հաստ կտաւը (պալատնօ) թրջած հարել։

—

Ոտքերի կոշտերի (մազզ) դէմ եղած հնարքներից մինն էլ մոմի ճրաքուն է, որը հաւասար քանակութեամբ մաղած կաւիճով խառնած, պէտք է չորի կտորին քսել և կոշտերին դնել։ Բացի սրանից կոշտերը շատ հեշտութեամբ անհետանում են, եթէ կոշտի մեծութեամբ, թուղթ քացախի մէջ 3—4 օր թրջած, հասարակ սոխի կտոր դնուի կոշտի վրայ։

—

Գինեմոլութեան դէմ—եթէ հաւատանք մի գերմանացի



բժշկի, խնձորը այնպիսի մի յատկութիւն ունի, որ եթէ գինեմոլները շատ ուտեն, ոգելից խմիչքներ գործածելու ախորժակը կորցնում են։ Այս նկատուած է Ռուսաստանում, ևս որ տեղ շատ կախարդներ և գիւղական ինքնակոչ հաքիմներ, այս միջոցը գործադրում են որպէս գինեմոլութիւնից հեշտ ազատուելու իսկական միջոց։

——

Ոտքերը տաքացնելու հնարք.—Այս հնարքը Բրիտանական զինուորներն են գտել, որոնք հետեւեալ կերպիւ են գործադրում—կատարում։ Պէտք է ոտքը բար-

ձրացնել և ծնգան տակը ոտքով խփել. որից յետոյ անմիջապէս յայտնւում է վերևից դէպի ոտքերի մասը սահուող—տարածուող դուրալի տաքութիւն։

—

Այրողնիւթերից այրուածներին, կտաւատի ձէթը (Льняное масло) շուտ է առողջացնում։

—

Հասարակ սապնի թանգագին յատկութիւնը։ Վերջերս լոյս տեսած ախտահանական (դիզենֆէկցեայ) ոչ մի հընարք, չէ կարող հաւասարուել և համեմատուել հասարակ սապնի հետ, որը հակավարակուող յատ-



կութիւն ունի։ Գերմանիայում կատարած քննութիւնից յայտնուեցաւ, որ սապնաջուրն ևս ամենասաստիկ հակամիկրոբային հընարքներից պակաս չէ ներգործում, հարնքի և խոլերի միկրոբներին սպանելում։

—

Փռշտում են արդեօք ծանր հիւանդները։ Բժիշկ Գետչինը ոչ մի դէպք չէ յիշում, որ իր ծանր հիւանդներից որև է մէկը փռշտած լինի։ Երևի հէնց այդ է պատճառը, որ փռշտալը առողջութիւն են համարում և դորա համար է որ մարդիկ միմեանց փռշտալիս «առողջութիւն» են ասում։ Տէյլիօր

բժիշկն ես այս կարծիքը հաստատում է այն պատճառով, որ հին ժամանակներից սկսած, ժողովրդի հաւատալիքը ծանր հիւանդութեանց ժամանակ չը փոշտալը, պէտք է վերագրել, հիւանդի ջըղային դրութեան թուլութեանը։

—

Սրճի օգտակար յատկութիւնը.— վաղուց է որ կարծում են թէ սուրճը իր մէջ այնպիսի յատկութիւն ունի, որ կարող է սպանել զանազան թունաւոր միկրօբըներ։

Ինչպէս և քննութիւնից երևաց որ 5 մաս եռացրած սրճից՝ Հարնքի բացիլը 2—3 օրում չքա-



նում է—10 մաս սրճի թրմոցի մէջ. Կարմիր քամու (րօժա) բացիլը օր ու գիշերուայ մէջ. Խոլերայի բացիլը մաքուր սրճի մի մաս թրմոցի մէջ 7—8 ժամից կորչում է. և եթէ այդ բացիլը 30 մաս սրճի թրմոցի մէջ լինի դրուած, կէս ժամից բոլորովին ոչնչանում է։

Սրճի այս օգտակարութիւնը, նրա այրող նիւթերիցն է, որը ստացւում է բովելիս։

—

Մարմնի վրայ, սաստիկ քորի հետ յայտնուած կարմիր բծերը, որոնք նմանում են աւելի ջրածաղկի և մարմնի մորթից քիչ բարձր են երևում.

Այդ տեղերը քօրի (քօրնի) իւղով, մի քանի անգամ քսելուց, երկու օրից յետոյ, ամբողջապէս ցաւն անհետանում է և այդ հիւանդութիւնը անվերադառնալի անցնում։

—

Կանանց ամսական հոսման կապվելը. եթէ առաջացել է ցրտից և հոգեկան յուզմունքից պէտք է փորին տաք փաթեթ (կոմպրէս)՝ և ոտքերը տաք աղաջրի մէջ դնել։ Բացի դրանից լաւ է ներգործում և հետևեալ խոտերից կազմած թրմոցը (настой) 2 ունց. Մեղրախոտ (մելիսէի) և կէս ունցի երիցուկ (ռոմաշկայ), որոնք իրար խառնելուց յետոյ մի թէյի գդալ մի բաժակում (չաշկայ) թրմոց պէտք է դնուի և առաւօտ երեկոյ մի-մի բաժակ խմուի։



## ԿԱՆԱՆՑ ՅՂՈՒԹԵԱՆ ՕՐԱՑՈՅՑԸ

| Վերջին դաշտանը | Ծննունդը լինելու է | Վերջին դաշտանը | Ծննունդը լինելու է |
|---|---|---|---|
| Յունվ. 1 | Հոկտ. 8 | Ապրիլ 1 | Յուն. 6 |
| ” 5 | ” 12 | ” 5 | ” 10 |
| ” 10 | ” 17 | ” 10 | ” 15 |
| ” 15 | ” 22 | ” 15 | ” 20 |
| ” 20 | ” 27 | ” 20 | ” 25 |
| ” 25 | Նոյեմ. 1 | ” 25 | ” 30 |
| ” 28 | ” 4 | ” 28 | Փետր. 2 |
| Փետրվ. 1 | ” 8 | Մայիս 1 | ” 5 |
| ” 5 | ” 12 | ” 5 | ” 9 |
| ” 10 | ” 17 | ” 10 | ” 14 |
| ” 15 | ” 22 | ” 15 | ” 19 |
| ” 20 | ” 27 | ” 20 | ” 24 |
| ” 25 | Դեկտ. 2 | ” 25 | Մարտ 1 |
| Մարտ 1 | ” 6 | ” 28 | ” 4 |
| ” 5 | ” 10 | Յունիս 1 | ” 8 |
| ” 10 | ” 15 | ” 5 | ” 12 |
| ” 15 | ” 20 | ” 1[illegible] | ” 17 |
| ” 20 | ” 25 | ” 15 | ” 22 |
| ” 25 | ” 30 | ” 20 | ” 27 |
| ” 28 | յ. 2 | ” 25 | Ապր. 1 |

| Վերջին դաշտանը | Ծնունդը լինելու է | Վերջին դաշտանը | Ծնունդը լինելու է |
|---|---|---|---|
| Յունիս 28 | Ապրիլ 4 | Հոկտ. 1 | Յուլիս 8 |
| Յուլիս 1 | " 7 | " 5 | " 12 |
| " 5 | " 11 | " 10 | " 17 |
| " 10 | " 16 | " 15 | " 22 |
| " 15 | " 21 | " 20 | " 27 |
| " 20 | " 26 | " 25 | Օգոս. 1 |
| " 25 | Մայիս 1 | " 28 | " 4 |
| " 28 | " 4 | Նոյեմ. 1 | " 8 |
| Օգոստ 1 | " 8 | " 5 | " 12 |
| " 5 | " 12 | " 10 | " 17 |
| " 10 | " 17 | " 15 | " 22 |
| " 15 | " 22 | " 20 | " 27 |
| " 20 | " 27 | " 25 | Սեպտ. 1 |
| " 25 | Յունիս 1 | " 28 | " 4 |
| " 30 | " 4 | Դեկտ. 1 | " 7 |
| Սեպտ. 1 | " 8 | " 5 | " 11 |
| " 5 | " 12 | " 10 | " 16 |
| " 10 | " 17 | " 15 | " 21 |
| " 15 | " 22 | " 20 | " 26 |
| " 20 | " 27 | " 25 | Հոկտ. 1 |
| " 25 | Յուլիս 2 | " 28 | " 4 |
| " 28 | " 5 | | |



# IX. ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

Գեղեցկութիւնը թարմ պահելու պարզ միջոց.—Աշխարհիս ամենագեղեցիկ կանանցից մէկն էր Դիանա դը-Պուատիէ —Ֆրանսիացւոց Հենրիկոս 2-րդ թագաւորի սիրելի գեղեցկուհին, որ ապրում էր մեզանից 350 տարի առաջ և կրում էր հերցոգուհի de Yalentinois տիտղոսը։ Պատմում են, որ նա իւր արտաքին կուսական թարմութիւնը պահպանել էր և լաւ ձի հեծնող էր մինչև 66 տարեկան հասակը։ Ժամանակակիցները նրա մասին լուրեր էին տարածում, թէ նա իւր գե-

ղեցկութիւնը պահպանելու համար ինչ-որ խառնուրդներից կազմուած մի գաղտնի միջոց ունի· իսկ սնոտիապաշտները կամ նախանձոտ կանայք նրան մեղադրում էին, թէ նա յարաբերութիւն ունի դեւերի հետ, որոնց՝ իւր հրաշալի գեղեցկութիւնը պահպանելու փոխարէն՝ պէտք է իւր հոգին տայ։

Ինչումն էր կայանում իսկապէս այդ բանի գաղտնիքը՝ ինքը Դիանա—դը-Պուատիէն ոչ ոքին չէր յայտնում։ Այդ մասին իմանում էր միայն նրա վարսավիր՝ դեղագործ Ուգարը, բայց գեղեցկուհու կենդանութեան միջոցին, այդ մասին յամառ կերպով լռում էր։ Դիա-



նայի մահուանից յետոյ նա հետեւեալն ասաց· «Ես, Ուգարս, դեղագործս, վիրաբոյժս և անուշահոտ իւղեր ծախողս՝ արդ յայտարարում եմ պատուովս, խղճովս և իմ սիրասուն տիրուհու madame Դիանա դը-Պուատիէի, de Valentinois հերցոգուհու սուրբ յիշատակով, որ միակ գաղտնի միջոցը, որ նա գործ էր ածում մինչև 72 տարեկան հասակը իւր առողջութիւնը, գեղեցկութիւնը և ջահէլութիւնը պահպանելու համար, — անձրևի ջուրն էր։ Ճշմարտապէս պնդում եմ, որ ամբողջ աշխարհում ուրիշ այլ միջոց չկայ, որ անընդհատ գործ ածուի լուացուելու, լողա-

նալու և նպատակայարմար ընել կաշին փափուկ և ճկուն պահպանելու համար, երեսի գոյնը՝ աւելի մաքուր և գեղեցկութիւնը ամենակատարեալ անելու համար, քան թէ—անձրևի ջուրը»։

—

Կիսահում եփած և խորոված մսի վնասակարութիւնը հաստատում է բժիշկ Վալէնը, որը և խորհուրդ է տալիս իրենց առողջութիւնը գնահատող մարդկանց, որ նոքա արիւնոտ և կարգին չ՚եփուած ու չ՚խորոված մսից զ՚գուշանան, որ անչափ վնասակար է։

—



Հասարակ ծխախոտի (մախորկայ) օգտակար յատկութիւնը.—Ծխախոտը օձերի խլուրդների և մկների դէմ շատ լաւ միջոց է։ Եւ եթէ խոտի վրայ գիշերողի բոլորի շուրջը ծխախոտ ցանուի, օձերի խածելուց անվնաս կ՚մնայ։ Այս միջոցով կարելի է, այգիներում խլուրդների, օձերի և մկների յաճախած տեղերը նա և նրանց կրծելուց և վնասելուց ազատ պահել։

—

Անքնութեան դէմ.—Բժիշկ Գամմոնդը, անքնութեան պատճառ համարում է, այն ամեն միջոցները՝ որոնցով ուղե-

ղում արիւնի աւելանալ է առաջանում։ Ինչպէս և մեծ մասամբ այդ պատահում է, անընդհատ և անչափ մտաւոր զբաղմունքի կամ հոգեկան սաստիկ գրգռման ժամանակ։

Քունը, մարդու ամենաբարեբար պարգեն է, նա բժշկում է, թարմացնում, կազդուրում կազմուածքը, ներգործելով զուարթացնում և հոգին։ Մարդուց քունը խլել նշանակում է կեանքից զրկել։ Օգտակար են կաթը և հասարակ սննդարար կերակուրներ, սենեակում մաքուր օդ առանց աղմուկի և հոգեկան հանգստութիւն։



Ծ խ ո ղ ն ե ր ո ւ ն.—Պարիզի հիւանդանոցներուն մէջ եղած անթիւ հիւանդներու վերքերուն դարմանումին գործածուած փոխուելու համար բարակ ու նուրբ կտաւեղէններն, աղտոտուելուց ու գարշահոտուելուց վերջը կ'ապանեխուին ու սիգարի թղթի մեծ գործարանատէրերու կը վաճառուին՝ մեծ մասամբ սիգարի թղթի գործածութեան համար։ Է՛հ նրբաճաշակ ծխողնե՛ր, ձեր սիգարները ծխած ժամանակ այդ եթէ կուզէք մտաբերեցէ՛ք։

## X. ԿԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ

(Հասարակ պարտամուրհակի օրինակ)

Թիֆլիս, 1-ին Յունիսի 1899 Թ.

Մուրհակ 1000 րուբլ. արժաթի։

Յուլիսի մէկից, հազար ութհարիւր իննսուն և եօթը ամի, երեք ամիս ժամանակով, այս իմ պարտամուրհակովս պարտաւորւում եմ վճարելու Թիֆլիզի 2-րդ կարգի վաճառական Յովհաննէս Մաթէոսեան Կիրակոսեանին կամ որին նա կը հրամայէ հազար ռուբլի արժաթ, որը ես նրանից ապրանքով (կամ զուտ փողով) լիովին ստացել եմ։

Ստորագրութիւն—Տփխիսի քաղաքացի Անտօն Պօղոսեան Նիկողոսեան։

---



### 100 ՌՈՒԲԼՈՒ ՏՈԿՈՍՆԵՐԸ

| Ամիս | 4% | 5% | 6% | 7% | 8% | 9% | 10% |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Ռ. Կ. | Ռ. Կ. | Ռ. Կ. | Ռ. Կ. | Ռ. Կ. | Ռ. Կ. | Ռ. Կ. |
| 1 | —33⅓ | —41⅔ | —50 | —58$^1/_3$ | —66⅔ | —75 | —83⅓ |
| 2 | —66⅔ | —83⅓ | 1.— | 1.16⅔ | 1.33⅓ | 1.50 | 1.66⅔ |
| 3 | 1.— | 1.25 | 1.50 | 1.75 | 2— | 2.25 | 2.50 |
| 4 | 1.33$^1/_3$ | 1.66⅔ | 2.— | 2.33⅓ | 2.66⅔ | 3— | 3.33$^1/_3$ |
| 5 | 1.66⅔ | 2.8⅓ | 2.50 | 2.91⅔ | 3.33$^1/_3$ | 3.75 | 4.16⅔ |
| 6 | 2.— | 2.50 | 3.— | 3.50 | 4 — | 4.50 | 5— |
| 7 | 2.33⅓ | 2.91⅔ | 3.50 | 4.88⅓ | 4.66⅔ | 5.25 | 5.83⅓ |
| 8 | 2.66⅔ | 3.33⅓ | 4— | 4.66⅔ | 5.33⅓ | 6— | 6.66⅔ |
| 9 | 3— | 3.75 | 4.50 | 5.25 | 6— | 6.75 | 7.50 |
| 10 | 3.33⅓ | 4.16⅔ | 5— | 5.83⅓ | 6.66⅔ | 7.50 | 8.33⅓ |
| 11 | 3.66⅔ | 4.58⅓ | 5.50 | 6.41⅔ | 7.33$^1/_3$ | 8.25 | 9.16⅔ |
| 12 | 4— | 5— | 6— | 7— | 8— | 9— | 10— |

## ԴՐՈՒԱԳԱՒՈՐ ԹՂԹԵՐԻ ՀԱՐԿԸ

*Տ ո ւ ր հ ա ջ ն ե ր ի*

| Արժողութ. գումարը. | | | | Թերթի գինը |
|---|---|---|---|---|
| | | 50 | ր. | 10 |
| 50-ից | մինչև | 100 | » | 15 |
| 100 | » | 200 | » | 30 |
| 200 | » | 300 | » | 40 |
| 300 | » | 400 | » | 54 |
| 400 | » | 500 | » | 70 |
| 500 | » | 600 | » | 80 |
| 600 | » | 700 | » | 90 |
| 700 | » | 800 | » | 1— |
| 800 | » | 900 | » | 1,15 |
| 900 | » | 1000 | » | 1 20 |
| 1000 | » | 1500 | » | 1,40 |
| 1500 | » | 2000 | » | 2,50 |



| Արժողութ. գումարը. | | | | Թերթի գինը |
|---|---|---|---|---|
| 2000-ից | մինչև | 320 | ր. | 3,70 |
| 3200 | » | 4000 | » | 5,15 |
| 4000 | » | 6400 | » | 6,80 |
| 6400 | » | 8000 | » | 9— |
| 8000 | » | 10000 | » | 11,40 |
| 10000 | » | 12000 | » | 13,80 |
| 12000 | » | 15000 | » | 15,60 |
| 15000 | » | 20000 | » | 21— |
| 20000 | » | 25000 | » | 37,66 |
| 25000 | » | 30000 | » | 33,60 |
| 30000 | » | 40000 | » | 42— |
| 40000 | » | 50000 | » | 84— |

---

# XI. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ

## I.

ԵՐԿՐԱԳՆ. ՄԱԿԵՐԵՒՈՅԹԸ 509,950,714 քառակ. կիլօմետր է (մի կիլօմետրը 469 սաժէն է)։

ՑԱՄԱՔԸ երկրագնդիս մօտ 1/3 մասն է կազմում—2,458,804 հող 6,802,634 ջուր։

ՈՎԿԻԱՆՈՍՆԵՐԻ ՄԻՋԻՆ ԽՈՐՈՒԹԻՒՆԸ.—Ատլանտեանը 3,790, Հնդկականը 3,444. Մեծ-խաղաղականը՝ 4003, Հարաւային կիսագնդինը 3,390 մետր։

## II.

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԵԱՆՔԻ ՄԻՋԻՆ ԹԻՒԸ.

Մինչև 60 տ. հասն. են 100-ից 6 մարդ
» 80 » » 500 1 »
» 100 » » 1000 1 »

Մեռնում են տարէնը 33



միլ. այսինքն ամէն օր 96 հազար մարդ, ամէն մի ժամում 3730 մ. ամէն մի րոպէում 60. մի վայրկեանում մի հոգի։

Ծնւում են ամէն տարի 42 միլ. այսինքն 9,500,000 աւելի, քան մեռնում են։

Պսակւում են 82 միլ., 120 մարդուն մի պսակ է գալիս։

## III.

ԵՐԿՐԱԳՆԴԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ։

Երկրագնդիս վերայ բնակւում են մօտ 1,564 միլիօն բնակիչ, որոնցից Եւրոպայում 366 միլ., Ասիայում 860 միլ., Աֆրիկայում 206 միլ. Ամերիկայում 125 միլ. և Աւստրալիայում 5 միլիօն։

Երկրագնդիս ազգերը խօսում են 3600 լեզուից աւելի։

Բոլոր կրօնները երկրագնդիս վերայ 1000-ից աւելի են։

# XII. ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ

## ա) ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՌՔԵՐԸ

1. ՂԱՐՍԻՑ—ԿԱՂԶՈՒԱՆ (71 վերստ)։

Զարմալի . . . . . 20 „
Վերին-Ղամարլու . . . . 20 „
Ներքին Ղամարլու . . . . 16 „
Կաղզուան. . . . . 15 „

2. ՔԻՒՐԴԱՄԻՐԻՑ—ՇԱՄԱԽԻ (71 վերստ)

Ղարասաղկալ . . . . 18 „
Աղսու . . . . . 15 „
Ճերադիլկ . . . . 18 „
Շամախի . . . . . 18 „

3. ԴԷՊԻ ՕՐԴՈՒԲԱԹ (508 վ.)

ԵՐԵՒԱՆ . . . . .264 „
Աղամզալու . . . . 13 „
Ղամառլու. . . . . 15 „
Դաւալու . . . . $18^{3}/_{4}$ „
Սադարակ . . . . $18^{1}/_{2}$ „
Բաշ-Նորաշէն . . . . $22^{1}/_{2}$ „
Թաղսարխ . . . . . 10 „



Ղվրաըխ . . . . . 19 „
Բէյուք դիւզի . . . . 12 „
ՆԱԽԻՋԵՒԱՆ . . . . 21 „
Ալինջաչայ. . . . . $24^{1}/_{4}$ „
Ջուղա (Ջուլֆա). . . . 15 „
Ազա . . . . . . $29^{1}/_{4}$ „
ՕՐԴՈՒԲԱԹ. . . . . $17^{3}/_{4}$ „

4. ՏՓԽԻՍԻՑ—ԴԷՊԻ ԹԵԼԱՒ ($163^{3}/_{4}$ վ.)

Օրխևի . . . . : $10^{1}/_{2}$ վ.
Վազիանի . . . . . 13³/ „
Սարթաճալա . . . . 20 „
Կակաբէթ . . . . . 21 „
Կազրէթ . . . . . $13^{1}/_{2}$ վ.
ՍՂՆԱԽ . . . . . $21^{1}/_{2}$ „
Բակուրցիխէ . . . . $15^{1}/_{2}$ „
Մուկուզանի . . . . 17 „
Ախուրի . . . . . 14 „
ԹԵԼԱՒ . . . . . 16 „

5. ՏՓԽԻՍԻՑ—ՎԼԱԴԻԿԱՎԿԱԶ ($200^{1}/_{2}$ վ.)

Մցխէթ . . . . . $20^{1}/_{2}$ վ.
Ծիլկան . . . . . $14^{3}/_{4}$ „
ԴՈՒՇԷԹ . . . . . $17^{1}/_{2}$ „
Անանուր . . . . . $16^{1}/_{2}$ „

| | | |
|---|---|---|
| Փասանաուր . . . . | 21 | „ |
| Մլեթ . . . . | $18^1/_2$ | „ |
| Գուդաուր . . . . | $14^1/_2$ | „ |
| Կոբի. . . . . | 16 | „ |
| Կազբեկ . . . . | $17^1/_2$ | „ |
| Լարս . . . . | $14^1/_2$ | „ |
| Բալթա . . . . | $17^1/_2$ | „ |
| ՎԼԱԴԻԿԱՎԿԱԶ . . . | $12^1/_2$ | „ |

6. ՏՓԽԻՍԻՑ—ՄԱՆԳԼԻՍ (57 վ.)

| | | |
|---|---|---|
| Տարախմելայ . . . | 15 | |
| Կոջոր . . . . | 5 | „ |
| Գրիուտ . . . . | 18 | „ |
| Մանգլիս . . . . | 20 | „ |

7. ՏՓԽԻՍԻՑ—ԱՂԲՈՒԼԱԽ (54 վ.)

| | | |
|---|---|---|
| Տարախմելայ . . . | 13 | „ |
| Բորբալայ . . . | 11 | „ |
| Սագրաշէն. . . . | 15 | „ |
| Բելի-Կլիւչ . . . . | 13 | „ |

---



## բ) ԵՐԿԱԹՈՒՂԻՔԸ

—

### 1) ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԳՆԱՑՔՆԵՐԸ

Բաթումից-Բաքու գնացքը գալիս է գնում։

Բաթումից, պոստ. . . 8 ժ. 20 ր. առ.
Թիֆլիզէց, » . . 9 ժ. 5 ր. եր.
Բաթ. մարդ. ապ. դն. 8 ժ. 35 ր. եր.
Թիֆլիզից » 10 ժ. 57 ր. առ.

Բաքուից-Բաթում գնացքը գալիս է գնում։

Բաքուից, մարդ. գնացքը 4 ժ. 50 ր. ցեր.
Թիֆլիզից, պոստ. . . . 9 ժ. 10 ր. առ.
Բաքուից պոստ. . . . 12 ժ. 20 ր. գիշ.
Թիֆլիզից մարդ. գն. . 7 ժ. 48 ր. եր.

---

### 1) Կովկասեան երկաթուղի

ՌՈՍՏՈՎԻՑ—ՎԼԱԴԻԿԱՎԿԱԶ.

| վերստ | ՌՈՍՏՈՎ | II դ. | III դ. |
|---|---|---|---|
| | | Գները | |
| 2 | Զարեչնայա . . | — | — |
| 10 | Բաթայսկայա . | — 23 | — 15 |
| 34 | Կագալնիցկայա . | — 74 | — 49 |
| 58 | Ստեպնայա. . . | 1.26 | — 84 |

| | | | |
|---|---|---|---|
| 81 | Կուշչեօվկա . . | 1.74 | 1.16 |
| 99 | Կիսլեակովկա. . | 2.15 | 1.43 |
| 118 | ԿՌԻԼՈՎՍԿԱՅԱ *) . | 2.55 | 1.70 |
| 135 | Պավլովսկայա . . | 2.91 | 1.94 |
| 151 | Լեուշկովսկայա . | 3.17 | 2.10 |
| 171 | Տիխառեցկայա. . | 3.60 | 2.47 |
| 192 | Մալոռօսսիյսկայա . | 3.89 | 2.57 |
| 211 | Միրսկայա . . | 4.14 | 2.76 |
| 229 | ԿԱՎԿԱԶՍԿԱՅԱ . . | 4.38 | 2.92 |
| 242 | Գուլկեվիչի . . | 4.56 | 3.04 |
| 257 | Օտրադա-Կուբանսկ . | 4.76 | 3.17 |
| 273 | Կուբանսկայա . . | 4.88 | 3.32 |
| 280 | ԱՐՄԱՒԻՐ. . . | 4.97 | 3.50 |
| 313 | Կոնօկովօ . . | 5.70 | 3.80 |
| 335 | Նիկոլայեվսկայա . | 6 — | 4 — |
| 353 | Բագաալովսկայա . | 6.20 | 4.10 |
| 366 | ՆԵՎԻՆՆԱՄԻՆՍԿԱՅԱ. | 6.30 | 4.20 |
| 385 | Բարսուկի. . . | 6.40 | 4.40 |
| 410 | Կուրսավկա . . | 6.90 | 4.60 |
| 428 | Նագութսկայա . | 7 — | 4.80 |
| 446 | Սուվորովսկայա . | 7.20 | 4 84 |
| 466 | ՄԻՆԵՐԱՅԼՆ. Վադա. | 7.50 | 5 — |
| 490 | Նեզլոբնայա . . | 7.80 | 5.20 |

*) Գլխագիր կայարանները բուֆեթունին.



| | | | |
|---|---|---|---|
| 510 | Զոյլսկայա . . | 8.10 | 5.40 |
| 535 | Սալդաթսկայա . | 8.20 | 5.60 |
| 554 | ՊՐԱԽԼԱԴՆԱՅԱ. . | 8.40 | 5.60 |
| 568 | Կոտլեարեվսկայա . | 8.70 | 5.80 |
| 584 | Բարոկովօ . . | 8.80 | 5.90 |
| 599 | Էյլխօտովօ . . | 9.— | 6 — |
| 611 | Դար-Կօխ . . | 9.15 | 6.10 |
| 631 | Բեսլան . . . | 9.30 | 6.20 |
| 652 | ՎԼԱԴԻԿԱՎԿԱԶ. . | 9.60 | 6.40 |

ՊԵՏՐՈՎՍԿՈՒ ԳԻԾԸ

Բեսլանից

| | | | |
|---|---|---|---|
| 21 | Նազրան. . | 45 | 30 |
| 38 | Կարբուլախ . . | | |
| 48 | Սլեպցովսկայա . | 1.04 | 40 |
| 57 | Միխայլովսկի . . | | |
| 70 | Սամաշկինսկայա | 1.52 | 1.01 |
| 87 | Ալխանիւրտսկայա | | |
| 101 | Գրօզնա. . . | 2.18 | 1.47 |

ՊԵԱՏԻԳՈՐՍԿՈՒ ԳԻԾԸ

(Միներալնի-վադից)

| | | | |
|---|---|---|---|
| 14 | Ժելեզնօվօդսկ . . | 32 | 21 |
| 16 | Կարրաս . . . | 35 | 23 |
| 21 | Գերեվալ . . . | — | — |

| | | | |
|---|---|---|---|
| 25 | Պեատիգորսկ . . . | 54 | 36 |
| 41 | Եսենտուկ . . . | 89 | 59 |
| | Կիսլավոդսկ . . . | — | 70 |

---

2) Անդրկովկասեան երկաթուղի։

ՓՈԹԻՑ

| Վերստ | ՓՈԹԻ | II դ. | III դ. |
|---|---|---|---|
| 14 | Ճալադիդի . . | — 32 | — 21 |
| 35 | Նովո-Սենակի . . | — 77 | — 51 |
| 48 | Աբաշա . . . | 1.04 | — 69 |
| 61 | ՍԱՄՏՐԵԴԻ . . | 1.31 | — 87 |
| | ԲԱԹՈՒՄԻՑ—ՏՓԽԻՍ։ | | |
| 20 | Քաբուլեթի . . | — 44 | — 29 |
| 35 | Նաթանեբի . . | — 77 | — 52 |
| 49 | Սուփսա . . . | 1.05 | — 70 |
| 68 | Լանչխուտի . . | 1.47 | — 98 |
| 75 | Նիգոյեթի . . | 1.62 | 1.08 |
| 88 | Սաջավախո . . | 1.91 | 1.27 |
| 97 | ՍԱՄՏՐԵԴԻ . . | 2.09 | 1.39 |
| 108 | Կոպիտնարի . . | 2.23 | 1.55 |
| 125 | ՌԻՈՆ . . . | 2.69 | 1.79 |
| | Ռիոն—Քութայիս . | — 23 | — 15 |
| 132 | Աջամեթի . . | 2.85 | 1.90 |



| | | | |
|---|---|---|---|
| 154 | ԿՎԻՐԻԼԻ . . . | 2.87 | 2.10 |
| 166 | Զիրուլի . . . | 2.95 | — |
| 175 | Բելոգորի . . | 3.30 | 2.19 |
| 184 | Մարելիսի . . | — | — |
| — | Ցիպա . . . | — | — |
| — | Վաւմառինո . . . | | — |
| 219 | ՄԻԽԱՅԻԼՈՎՕ . . | 2.45 | 2.57 |
| 229 | Գոմի . . . | 3.45 | 2.74 |
| 243 | Քարելի . . . | 3.65 | 3.16 |
| 260 | ԳՈՐԻ . . . | 4.17 | 3.33 |
| 273 | Գրակալի . . | 4.60 | 3.60 |
| 285 | Կասպի . . . | 5.05 | 3.76 |
| 300 | Քսանկա . . . | 5.55 | 3.86 |
| 310 | ՄՑԽԵԹ . . . | 5.85 | 3.90 |
| 320 | Ավճալա . . . | 5.93 | 3.95 |
| 330 | ՏՓԽԻՍ . . . | 6 — | 4 — |
| | ՏՓԽԻՍԻՑ—ԲԱԳՈՒ։ | | |
| 337 | Նավթլուղ . . | —33 | — 10 |
| 350 | Ադ-Թաքլի . . | —45 | — 30 |
| 366 | Ղարայեազ . . | —80 | — 53 |
| 387 | Սոուխ-Բուլաղ . . | 1.20 | — 84 |
| 394 | Փոյլիլի . . . | 1.62 | 1.08 |
| 408 | Աղստաֆա . . | 1.92 | 1.28 |
| 427 | Թոուզ . . . | 2.33 | 1.55 |

| | | | |
|---|---|---|---|
| 452 | Ձեռապամ . . . | 2.87 | 1.91 |
| 474 | ՇԱՄՔՈՐ . . . | 3.35 | 2.23 |
| 496 | Ելիսավետապոլ . | 3.60 | 2.45 |
| 513 | Դալ-Մահմադլի . | 3.90 | 2.60 |
| 536 | Գերան . . . | 4.22 | 2.81 |
| 559 | Եւլախ . . . | 4.53 | 3.24 |
| 583 | Լեաքի . . . | 4.48 | 3.24 |
| 602 | ՈՒՋԱՌԻ . . . | 5.10 | 3.40 |
| 626 | Միւսուսլի . . | 5.70 | 3.80 |
| 645 | Քիւրդամիր . . | 6 90 | 4 — |
| 668 | Սագիրի . . . | 6.— | 4 10 |
| 692 | ՂԱՐԱՍՈՒ. . . | 6.30 | 4.20 |
| 716 | Հաջի-Քաբուլ . . | 6.60 | 4.40 |
| 733 | Նավագի . . . | 6.90 | 4.60 |
| 766 | Ալեաթ . . . | 7.20 | 4.80 |
| 787 | Սանգաչալ . . | 7.50 | 5 — |
| 812 | Փութա . . . | 7.80 | 5.20 |
| 830 | Բալաջարի . . | 7.90 | 5.40 |
| 840 | ԲԱԳՈՒ . . . | 8.10 | 5.40 |

---

# ԵՐԱԶԱՀԱՆ

Ի՞նչպէս է առաջանում երազը, կամ երազում տեսած ամէն մի առարկայ ի՞նչ է գուշակում—դեռ մինչև օրս ոչ ոք ճշտօրէն բացատրած չէ։ Թէև 'ի հնուց յետէ զանազան ժամանակներում եղել են երազների յայտնի բացատրողներ և մեկնիչներ ինչպէս մեր այս տեսութեան վերջի մասում զետեղած Դանիէլ մարգարէի գուշակութիւնը, բայց քանի որ այդ գուշակութիւնները գիտութեան հիմնական փորձերով և ուսումնասիրութեամբը չէ բացատրուած, դժուար է հաւատ ընծայել։ Երազի և տեսիլքների բացատրու-

թիւնը, գիտութեան համար յայտնի նշանակութիւն ունենալով—ինչպէս հետեւեալ գրուածքից կ'երեւայ—շատերը այժմ քննութեան առարկայ են շինել և ամեն մի մասնագէտ-գիտնական իւր տեսակ է քննում և հասկանում երազը և տեսիլքը, օրինակ․

Բնագէտը—այդ քննում է մարդկային մարմնին համապատասխանող և բնական օրէնքներին հպատակւող երևոյթների տեսակէտից։

Բ ժ ի շ կ ը—համարում է մարդկային մարմնի գործարանների կանոնաւոր կամ անկանոն գործողութեանց արգասիք։

Հ ո գ ե բ ա ն ը—(պսիխոլոգ) բացատրում է քնի ժամանակ, մարդու մարմնի մէջ գտնուած անյայտ գոյութեանց տեսակէտից, ինչպէսին են խելքը, հոգին և այլն։

Իսկ մագնիտիզմով և հիպնոտիզմի



պարապողները, երազի երևոյթը մի այլ տեսակ վիճելով և ընդունելով, իրանց տարբեր հայեացքները ունենալու համեմատ էլ բացատրում են երազը։ Այսպիսով եթէ որ քունը և երազը միանգամից և միակերպ մինչև օրս դեռ չեն կարողացել բացատրել և վերջ դրել զանազան տեսակ կարծիքներին և մեկնութիւններին, սա առաւել դժուար է տեսիլքների և անուրջների պարզաբանութիւնը։ Ներկայումս մեծ մասամբ հաւատ են ընծայում բժիշկների ընդդիմախօսութեանը, որոնք հեշտ կարողանում են արհեստական քուն և երազ առաջացնել, ուղիղ այնպէս, ինչպէս ոչնչացնում են աւելորդ քնարբութիւնը։ Մագնիտացնողն սա ուղղակի քնացնում է մարդուն առանց դեղատան օգնութեան դիմելու (շարժուածքով ձեռքերով և աչքերով) և միայն իւր

ազդեցութեան շնորհիւ գրգռում է, և թմրացնելով անզգայացնում։

Մինչև օրս եղած քննութիւններից նաև երևում է, որ երազները, անուրջները ու տեսիլքները միշտ զանազան տեսակ են լինում, նայեած մարդու կարողութեանը, կազմուածքին, նիստ ու կացին. և մարդկային խառնուածքների համեմատ, տարբերվում են միմեանցից և բնաւորութեան նշաններով օրինակ. բարկացող մարդը՝ երևակայում է զարհուրելի կռիւներ, պատերազմներ և այլն։ Մելամաղձոտը՝ ձորեր, անտառներ և տխուր տեսարաններ։ Մաղասոտը՝ (հանդարտ և բարի) մարդուն երևում է անձրև, ծով, ջուր, ձկներ, անտառներ։ Արիւնային խառնուածք (sanguinist) ունեցողին՝ զուարճալի տեսարաններ։

Այսպէս երազները հետևանք են լինում



զանազան և անթիւ մարդկեղէն տպաւորութիւններին։

Մի քանի աստեղագէտներ էլ պնդում են, թէ ինչպէս արևը, լուսինը և այլ մոլորակները իրանց դրութեամբը և շարժումով ազդեցութիւն ունեն երկրագնդիս վրայ, այնպէս էլ ասում են նրանք, որ երազն էլ կախուած է նրանից թէ ինչն է ազդում քնածին, լուսինը թէ արևը, նրանց կարծիքով լուսինը հովանաւորում է քնածներին այն ժամանակ, երբ արևը հակառում է քնին, բայց իբր թէ չի դադարում մարմնի վրայ բարերար ներգործութիւն անելուց։

Շատերն ասում են—ինչպէս էլ Հոմերը—որ քունը նման է մահուան, իսկ տեսիլքը կամ անուրջը մեր կեանքի ուղղութեան մի ինչ որ տեսակն է։

Այսպիսի եղելութիւններին պէտք է

վերագրել ամեն ժամանակի և շատ ազգերի պատմութիւններից յայտնի տեսիլքների երևոյթները, որոնք շատ անգամ ուղիղ նախագուշակում էին ղետներ և ուրախութիւններ: Այս պատճառաւ էլ հին ժամանակներում թագաւորները ունէին իրանց գուշակող-խորհրդատուները, որոնք անուանում էին պալատական աստղագէտներ և մեկնիչներ:

Շատ նոյնանման օրինակներ կարող էինք բերել այստեղ՝ եթէ թոյլ տար մեր այս հրատարակութեան չափը: Բայց ժամանակը և գիտութիւնը իրանց ուսումնասիրելովը դեռ շատ բան կ՚ասի, որը մեծամասնութեանը այսպէս հետաքրքիր և դեռ ևս անմատչելի գաղտնիք է:

Վերջացնելով այս տեսութիւնը աւելորդ չենք համարում մեր կողմից յայտնել, որ թէև մենք համամիտ չենք հետևեալ երեսներում զետեղած երազների առանց գիտնական հաստատ բացատրութեանը, բայց որպէս—դարերով ժողովրդի գործածութեան մէջ մտած —նրա հետաքրքրութիւնը շարժող—ընթերցանութեանը նպաստող և գրաւող նիւթ՝ մենք հրատարակում ենք:



---

## ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

### Զանազան տեսակ երազների մասին:

### Ա.

Աստուած.—Երազում Աստծուն տեսնելը՝ տեսնողի համար լաւ է, բոլոր չարերից կազատուի, թէ աղքատ լինի կը հարստանայ, հիւանդ լինի կ՚առողջանայ: Երազում Աստուծուն տան մէջ տեսնելը՝ նորոգութիւն է:

Աստղ.—Աստղ տեսնելը լաւ է—եթէ տան մէջ տեսնես՝ բարիքդ կ'աւելանայ, օտար տեղ լինիս յաջողութեամբ կը վերադառնաս: Եթէ շատ աստղեր՝ ճանապարհ կը գնաս և կը շահուես:

Ասպար առնելը՝ պատիւ է:

Աբեղայ տեսնելը՝ յարկ, պատիւ կա՛մ կռիւ է:

Աքաղաղ.—Զոհած աքաղաղը՝ բարի է և կռուի նշան:

Ագռաւներ.—Թշնամիներդ կը յարձակուին քեզ վերայ:

Աթոռ տեսնելը մեծութիւն է:

Աթոռ նստելը՝ բարձրութիւն է:

Ալեւոր.—Իրան ծերացած տեսնելը՝ հարստութիւն է:

Ալիւրը շահ և ուժ է: Ալիւր.—ամանով տեսնելը՝ մուրազ է:

Ականջը,—աղջիկ է կնիկ և կամ աչքալուսէք: Ականջ կտրելը վնաս է:



Աղաւնի տեսնելը՝ շնորհք է:

Աղուէս տեսնելը՝ ահ ու երկիւղ է, թէ որսաս՝ թշնամուդ կը յաղթես: Աղուէսը, որ մարդուց փախչի—պարտականն է, կը փախչի իրենից: Աղուէսի հետ կռիւ անողը՝ իր օգուտն կուռ կ'անի:

Աղջիկ.—Իր ծոցում աղջիկ տեսնելը՝ խնդութիւն է: Փոքր աղջիկ տեսնելը շատ օգուտ է:

Աղբիւր.—Երազում աղբիւր տեսնելը՝ շատ բաներից օգտուել է նշանակում. աղբիւրում լուացուելը՝ օգուտ է. Աղբիւրից ջուր վերցնելը վատ է. աղբիւրից ջուր խմելը՝ շնորհք է և բարի:

Աղ.—Աղ և անանուխ տեսնելը՝ բարի և անուշ խօսք է. միայն աղ տեսն. կսկիծ է, սպիտակ աղը՝ փող և օգուտ է. սև աղը՝ վատ խօսք և տրտմութիւն է. կոտրուած աղը՝ կռուի խափանում է:

Աղի ձուկը՝ կսկիծ է և հոգս:

Աղեղն.—Աղեղ տեսնելը՝ զրոյց և ճօշք է։

Ամպերից ձայնթմունք լսելը՝ բարի չէ։

Իրեն աղեղնաւոր տեսնելը թշնամանող լեզու է։

Աղխս հանելը՝ տան շինութիւն է և լաւ։

Աղքատին բան բաշխելը՝ բարի և օգուտ է։

Ամանաթ առնել և պահելը՝ ճշմարտութիւն է։

Ամբաստանել մէկին՝ շատ վնաս է։

Այծ տեսնելը՝ ճանապարհ է։

Այրուած.—Այրուած հանդերձը՝ (շորը) մահուան վնաս և երկիւղ է։ Այրուած և աւերուած տեսնել իւր տունը՝ վնաս է։

Անձրև ժամանակ տեսնելը՝ բարի է։

Անդաստան տեսնելը՝ աշխատանք է։

Անուշ ուտելիքը՝ լաւ է։

Անապատում նստելը՝ նեղութիւն է։

Աչք տեսնելը՝ փողի շատութիւն է։



Աչքեր տեսնելը՝ շատ հարստութիւն է։

Մեծ աչք ունենալ՝ երկարակեցութիւն է. աչք հանել երազում, կինը կամ որդին կը մեռնի։

Ապարանջանը նեղութիւն և հոգս է։

Առիւծ.—Երազում առիւծ տեսնելը՝ թագաւոր, իշխան և կամ մեծ մարդ է։

Եթէ երկու առիւծ իրար հետ կըռուին՝ երկու թագաւոր կամ երկու մարդ կ՚կռուին։

Եթէ դու առիւծի վրայ նստած լինես՝ պարոնութիւն (աղայութիւն կ՚անես)։

Եթէ Առիւծը՝ դեմդ դուրս գայ՝ մեծ մարդից երկիւղ կը հասնի քեզ։

Առու.—Տանդ մէջ առու տեսնելը գանձ և օգուտ է։

Ատամ.—Եթէ բոլոր ատամներդ թափուեն՝ շատ գանձ կը գտնես։ Եթէ առաջին ատամդ ընկնի՝ ազի կը հանդիպես և ճանապարհ կը գնաս։ Առաջին

ատամները հանելը որդւոյ մահ է, դու-
շակում։ Ներքին ատամներ հանելը՝
տրտմութիւն է, իսկ թէ վերը հանես,
ազգականներից մէկը կը մեռնի։ Սեւ-
ցած ատամները՝ հիւանդութիւն է։

Արեգակ.—Երազում արեգակ տես-
նելը՝ թագաւոր է։ Արեգակը իր ձեռ-
քում տեսնելը՝ պարոնութիւն է տես-
նողի համար։ Խաւար արեգակ տես-
նելը՝ տեսնող պարոնի համար չար է։
Երկնքից ընկած արեգակ տեսնելը՝
թագաւորի մահ է։ Արեգակը (մի) տես-
նելը նեղութիւն է, ամպի տակ տես-
նելը՝ նեղութիւն կամ պայծառութիւն է։

Արծաթը նեղութիւն է։ Արմաւը՝ շատ
բարի և անոյշ խօսք է։ Արմաւենին
զաւակ և ուրախութիւն է։

Արիւն թափելը՝ մեծ վնաս է։

Արիւն կամ արիւն առնելը՝ շնորհք է։

Արծիւ.—Արծիւ տեսնելը՝ առագու-



թիւն է, Արծուի վրայ որ նստես՝ պա-
րոնութեան կը տիրանաս։ Արծուի հետ
որ կռուես կամ խփես՝ մեծ մարդկանց
կը նախանձես և հետները կը կռուես։
Եթէ արծիւը քեզ խփի՝ մի պարոնից
զէնք կ'առնաս։

Արջ տեսնելը՝ անիրաւ և ագէտ մար-
դու խօսք է։ Արջից հալածուելը՝ կռուից
կ'ազատուես կամ մեծից զգուշ կաց։

Ամէն գայլ գազան՝ թշնամի է։

Աւետարանը՝ հալալ մուրազ է։

Աւազանը՝ հալալ առճիկ և օգուտ է։

Աւազ ձեռք որ ածես՝ մեծ մարդուց
բան կ'առնաս։

Աւազակ որ տեսնես՝ զգուշացիր
կռուից։

Աւագ.—Որէն աւագ տեսնելը՝ շատ
լաւ է և բարի։ Աւագ, որ տեսնես՝ թըշ-
նամին երկրի վրայ կը յարձակուի։

Աւրեղ.—որ է Սուլուխ՝ շատ դանձ է։

## Բ.

Բարձրանալ երազում և վայր ընկնել մէկի ձեռքով՝ մահուան վնաս է։

Բարձր տեղերի վրայ եթէ քայլես, մեծութիւն կը գտնես։

Բարձր տեղից ընկնելը՝ վնաս է

Բարբառոտի և ուրիշ սազերի ձայնը՝ անուշ խօսք է։ Բարև տալը՝ կռիւ է։ Բաղանիքը՝ հոգս է։ Բաղանիք եթէ գնաս, խարէութեան մէջ կընկնես. Բաղանիքից եթէ դուրս գաս, հոգսերից՝ կազատուես։ Բաղանիքում լուացուելը ռոճիկ և մեծ նեղութիւն է,

Բադ տեսնելը՝ մեծ մարդ է։

Բագ շինելը կամ հիմք ձգելը բարութիւն է։

Բաղը լեղու է։

Բամբակը՝ արդարութիւն է։

Բանջարը՝ շահ է։

Բերդ մը տեսնես՝ թշնամիներից մօտ



ճշմարիտ դուրս կը գաս։ Բերդ մտնելը՝ պարխապ և ամրութիւն է։ Բերդի մէջ՝ նեղութիւնից ազատուել է։

Բերան լուանալը՝ ռոճկի պակասել է։

Բիր տեսնես՝ կամ առնես՝ եղբայր կամ որդի է։ Բիր կտրելը՝ եղբօր կամ ազգականի մահ է։

Բլուր տեսնելը՝ երկրի խաղաղութիւն է։

Բու տեսնելը՝ նեղութիւն է։

Բուրվառ տեսնելը կամ առնելը՝ լաւ չէ, կռիւ է։

Բուրդ.—Սպիտակ բուրդ տեսնելը կամ առնելը՝ առողջութիւն և օգուտ է։ Սև բուրդը՝ սուգ և լաց է։

Բոբիկ իրեն տեսնելը՝ զէնք կը գայ իր վրայ։

Բորոտ.—Իրեն բորոտ տեսնելը՝ գանձի շատանալ, մեծութիւն և շահ է։

Բողկ ունելը՝ առողջութիւն և օգուտ է։

Բրել կամ գործել, բարի և շահ է։

Գ.

Գառներ տեսնելը՝ մեծ շահ է: Գառներ մորթելը՝ լաւ չէ. գառներ լուանալը՝ զէնք և սրտմտութիւն է:

Գազան տեսնելը՝ առանց վնասի կռիւ և երկիւղ է: Գազանի խաղալը՝ թշնամու հաշտութիւն է, իսկ փախչելը՝ խաղաղութիւն:

Գանձ տեսնել կամ առնելը՝ շահ է:

Գարին՝ բաղդ կամ բաժին է:

Գայլ սպանես՝ թշնամուդ կը յաղթես. գայլի վերայ նստես՝ նեղութիւն է:

Գաւազան որ տեսնես՝ թշնամուդ դէմ կ'ամրանաս: Գաւազանը ձեռքիդ՝ լաւ է, որդի կամ մեծ շահ է:

Գաւաթ բռնելը՝ զաւակի (ունենալու) խնդութիւն է:

Գետ.—Գետ անցնելը՝ ձի հեծել է: Յստակ պարզ գետին մօտիկ տալը՝ առատութիւն է, պղտորը՝ լռութիւն է. գե-



տում լուացուիլն նեղութիւն է: Գետամ-վերկից ներքև գնալը՝ պարտութիւն է:

Գերի տեսնելը՝ նեղութիւն է. իրեն գերի տեսնելը՝ մեծութիւն և շահ է:

Գերի.—Ճանապարհ գնալ՝ նեղութիւն է:

Գերանը որ կոտրուի՝ տանուտէր կ'մեռնի:

Գերեզման բացելը՝ վնաս է—իրան գերեզմանում տեսնելը՝ պատասխանի ենթարկուել կամ բանտ ընկնել է:

Գեղեցիկ պատկերը նկարած տեսնել՝ փառք է:

Գէշ հոտը՝ գէշ խօսք է:

Գինի խմել կամ գնել՝ ոյժ և շահ է:

Գինձը՝ անուշ խօսք է: Գինձ ուտել կամ ժողովելը՝ կռիւ է: Գինձ հագնելը՝ մեծ շահ է:

Գիսաւոր աստղը՝ մեծութիւն և պատիւ է:

Գիրք կարդալը՝ ժողով է և նեղութիւն:

Գիր գրելը՝ բարի և մուրազ է.

Գլուխ.—Կտրած գլուխ ձեռին առ-

նելը՝ շատ գանձ գտնել է, գլուխը դեղ քսելը՝ անուշ խօսք է, գլուխ ածլել տալը՝ նեղութիւնից ազատուել. ուրիշների գլուխն ածլելը՝ ցաւից ազատուել է, գլուխ լուանալը կամ գլխով բան տեսնելը՝ զէնք է։ Սպիտակ գլուխը՝ յանկարծական մահ։

Իրեն գլխատած տեսնելը՝ մեծ վնաս է։

Գխոտր տեսնելը՝ ցոյց է տալիս ցըն-դութիւն և աղքատութիւն։

Գնդակ խաղալը՝ մեծի համար լաւ է, իսկ փոքր մարդուն՝ վատ։

Գոմէշ.—Գետի մէջ գոմէշ տեսնելը՝ բարի զրոյց է նշանակում։

Գոմ շինելն ուրախութիւն և շահ է։

Գոյնզգոյն հալաւը՝ ուրախութիւն է։

Գորտան ձայն լսելը՝ ուրախութեան խօսք է։ Գորտ եթէ սպանես՝ հաւատացեալ մարդու հետ հաշտութիւն կանես։

Գլխարկ ծածկելը՝ հարկիք է։



Գրաւական հանելը՝ իր տանից մահու վնաս է։

Գրող տեսնելը՝ մահուան մօտենալ է։

Գրիչ և կաղամարը խելք կամ ճանապարհ է։ Գրչամանը՝ կին է։

Դ.

Դանակ տեսնել կամ գնել լաւ չէ, կամ վատ լեզուն խափանում է։

Դաշտ՝ ահու բան կ'առնես։

Դաշտից որ դուս գաս՝ ազատութիւն է։

Դատաւորն՝ Աստուած է և դըրութինըդ կ'լաւանայ.

Դատաստանն՝ մեղաց քննութիւն է։

Դարպաս շինել կամ տեսնելը՝ հարուստ կնիկ է։ Դարպաս լայնացնելը պարոնութիւն է։ Դարպաս փակելն՝ մեծ մարդուց վնասուել է։

Դարբինը մեծ մարդ է։ Դարբնութիւնը թէ ինքդ անես, լաւ տանուտէր լինիս։ Դարբնի հարուածը, ամէնը բարի է։

Դեղին գոյնը՝ բոլորովին վատ է։

Դեր՝ նեղութիւն և մեղաց նշան է։

Դդում ցանելը՝ ջերմ, իսկ ուտելը՝ հիւանդութիւն է։

Դիակ՝ բարի զրոյց է։

Դիպակ տեսնել կամ հագնելը՝ մեծ պատիւ է։

Դմակ տեսնել կամ ուտելը՝ հիւանդութիւն է։

Դուռը՝ պատիւ է և մեծ մարդու հետ ծանօթանալ։ Դուռ բանալը՝ իր բաղտի բացուիլ և իր կամքի կատարուիլն է։ Դուռ ձգելը՝ կործանումն։ Դուռ կտրելը՝ մահու նշան է. Դուռը դուս գալը՝ լաւ չէ։

Դրամ տեսնել կամ ժողովելն՝ ագահութիւն է։

Դպրանոցին բարև տալը՝ կռիւ է։

Ե.

Եղն՝ աճի մէջ գնալ։ Եղը նստած տեսնել՝ մեծ աւետիս է կամ զուգակից սիրելին կ'գայ։



Եղան միս ուտելն՝ լաւ է ոմանք ասեն թէ նեղութիւն է։ Եղների կռուելն՝ թշնամի է։ Եղը մորթել՝ մահու վնաս է։ Եղ ուտելն՝ բարի է։

Եղնիկն տանը տեսնելը՝ սիրելին գալ։

Եկեղեցի տեսնել կամ շինելը՝ փառք է.—Եկեղեցի երթաս ազատութիւն է։

Եղջերուն՝ երկրի նեղութիւն է։

Երգեհոնը՝ ուրախութիւն է։

Երկինք բարձրանալը՝ մեծ պատիւ է։

Երկիրն՝ խնդութիւն է։

Երկանք տեսնել կամ աղալն՝ անհանգստութիւն է։

Երկաթ տեսնել կամ գնելը՝ տրտմութիւն և շատ վատ է։

Երակ կտրելը՝ մահու վնաս է։ Երակից արիւն առնելը՝ սրբութիւն է։

Երես լուանալը՝ զէն է.—Դեղին երեսը մեղք է. կարմիր երեսը՝ բանը լաւ լինի.—Գեղեցիկ երեսը մեծ փառք է։

Նրազ պատմելը երազում շատ լաւ է։

Զ.

Զանգակի ձայն լսելը՝ խնդութիւն և ուրախութիւն է։

Զաֆրանը՝ հիւանդութիւն է։ Զաֆրանով կերակուրը՝ լաւ է։

Զենելը—մորթելը՝ մեծ նեղութիւն է։

Զինուորը՝ տրտմութիւն է։

Զմրուխտը լաւ է։

Զնդանը մեծ հոգս և սուգ է։

Զուռնան կամ զուռնի ձայնը որ լսես՝ անձրև կամ կռիւ է։

Զրոյց անելը՝ նեղութիւն է։

Զրահը՝ ապանութիւն է։ Զրահ հագնելը՝ զէն է։

Է.

Էրէցը յարութիւն առնելիս՝ հին զրոյց է։ Մեռած աւագ էրէցին կենդանացած տեսնելը՝ մեծ զրոյցի նորոգուիլ է։ Էրէցին մեռած տեսնել՝ մեծ զրոյցի



խափանումն է։ Էրէցի գրիչ տեսնելը՝ խելք ու ճանապարհ է։

Էշը՝ շատ նեղութիւն է։ Էշը սպիտակ հեծած կամ բեռած՝ բարի է և պատիւ։

Ը.

Ըղունգ ունենալը՝ աղքատութիւն է։

Ընկոյզ ժողովելը՝ լաւ չէ։

Թ.

Թագաւորին ողջունելը՝ փառք է։

Թամք շինողը՝ խրատարար է։

Թանաք եփելն՝ լաւ է։ Թանաք վերևից թափելը՝ վատ խօսք է։

Թարախով իրան տեսնելը՝ շահ է և հարստութիւն։

Թագնուած իրան տեսնելը՝ բարի է։

Թևաւոր իրան տեսնելը՝ հոգիների հանդիպել է։

Թիւր բանը՝ նեղութիւն է։

Թղի ծառն՝ լիրբ մարդ է։—Թուզը (կա

նաշ) տեսնել կամ ուտել վնաս է։ Թուզը չոր) ուտելը՝ շահ է։

Թուխ իրան տեսնել՝ մեծութիւն է։

Թռչելը՝ ուրիշ տեղ գնալ է։ Թռչել կորից՝ այլ կին առնել։

Թռչել բարձրանալու համար՝ լաւութեան հասնել է. թռչելիս՝ ուրիշ երկրում մեծութիւն կ'ստանայ։

Թռչունի քեզ մերձենալը՝ մի անձն երանի է տալիս քեզ. թռչուն արձակելը՝ բարութիւն է. թռչունի փախչելը՝ վնաս է։

Թռչունների կռուելը՝ վնաս է։ Թռչունի հետ խաղալը թշնամիքդ կ'սիրեն քեզ։

## Ժ.

Ժամատունը եթէ զարդարած տեսնես՝ արքայութեան արժանի լինես։

Ժամ գնալը՝ կեանքդ բարի լինել է։

Ժամատան աղօթելը՝ լաւ բան անել է։

Ժամհարը՝ վատ դրութեան հասնես։

Ժուռ գալը՝ լաւ չէ։

Ժամացոյցը՝ օգուտ է։



## Լ.

Լոյսն.—աշխարհի խաղաղութիւն է. —հանգած լոյսն տրտմութիւն է։

Լուսին—և արեգակն առաւօտեան տեսնելը՝ ազգին վնաս է։

Լուսնի աստղը՝ խիստ շահ է.—կարմիր լուսինը՝ վնաս է։

Խաւար լուսինը՝ թագաւորի մահ է.—երկու լուսին տեսնելը՝ թագաւորներ իրար դէմ կը վերկենան։

Լուն՝ առճիկ է։

Լուծը՝ (եզների) բարի է։

Լեառն (բարձր) որ տեսնես՝ ազատութիւն է։

## Խ.

Խան կամ սուլթան տես՝ անչափ լաւ է։

Խաչակնքել երազում՝ մեծ պատիւ է։

Խաչը՝ չարչարանք է։

Խաւարը՝ նեղութիւն է։

Խաւեարը՝ հիւանդութիւն է։

Խաղողը՝ անձրև և ցնորք է.—սպիտակ խաղողը՝ խնդալ է։ Սևը՝ լաւ է. ժողոված խաղողը՝ գանձ է.

Խաչահանդերձը՝ սուգ մեռանի։

Խեցեղէն աման բռնելը՝ ուրախութիւն է։

Խմոր ունելը՝ շահ է։

Խնդալը՝ լաւ չէ։

Խնձորը՝ տղայ է, իսկ ունելը՝ շահ.—խնձոր առնելը՝ բարի համբաւ է.—խընձորի ծառը մեծ մարդ է։

Խուլը և համրը՝ շահ է։

Խունկ ծխելը՝ ապրանք և անոյշ խօսք է։

Խորոված միս ունելը՝ շահ է։

Խոզը՝ մահ է կամ այլազգի.—խոզի միս ունելը՝ ազգականների մահ է։

Խոտը՝ լաւ մարդ է.—խոտ ժողովելը՝ պատիւ և փառք է։

Ծ.

Ծաղիկ.—Ծաղկեայ անդաստանը՝ շահ



և ուրախութիւն է. ծաղկելը անհանգստութիւն է. ծաղիկ քաղելը՝ կին առնել է. ծաղկելը՝ բարի է։

Ծառ.—Ծաղկած ծառը—պտղով ծառը՝ բարի է. ծառ կտրելը կամ այրելը՝ վնաս է. ծառը եթէ ծխի՝ լաւ չէ. ծառի տերև թափուելը՝ արիւնհեղութիւն է. ծառ վայր ձգելը մարդու մահ է. մեծ ծառ կտրելը՝ մեծ մարդու մեռնիլէ. ծառի վրայ նստելը՝ և մանգալը՝ փառք է. կանանչ ծառը՝ գանձ է. չոր ծառը՝ տրտմութիւն է. ծառ ղուգելը կին է։

Ծամ (հիւս) կտրելը՝ բաժանումն է։

Ծառան՝ աւետիք և խնդութիւն է։

Ծարաւելը՝ բարի չէ։

Ծանր բան շալակելը՝ մեծ մեղք է։

Ծիծաղելը՝ տրտմութիւն է։

Ծիծը՝ տղայ կամ մեծութիւն է։

Ծնանելը՝ (կնոջ) մեծ շահի գալ է։

Ծունր դնելը՝ առ Աստուած յոյս է։

Ծով.— պղտոր ծովը՝ նեղութիւն է. ցամաք ծովը՝ աշխարհի լիութիւն է. ծովում լուացուելը՝ շահ է. ծով մտնելը՝ թշնամիներից արդարանալ. ծովը որ մարդու ներս քաշի՝ տեսնողըն դողի ձեռքով կ'ազատուի։ Ծովակի վրայ նըստելը՝ զուարթութիւն է. ծովից դուրս գալը՝ պատիւ է և ազատութիւն, չը դուրս գալը՝ մեծ վնաս է։

Ծեր.— ծերութեան ժամանակ իրան մանուկ տեսնելը՝ կեանքի աւելանալն է։ —Իրան ծեր տեսնելը մանկութեան ժամանակ՝ նոյնպէս կեանքի աւելանալն է։

Կ.

Կամուրջ շինելն շատ լաւ է։

Կառք նստելը՝ մեծ պատիւ է։

Կայծակը՝ խռովութիւն է։

Կարկուտը՝ երկրի նեղութիւն է։

Կարասը՝ նեղութիւն է։



Կաղամբի տակ հանելը՝ վնաս է։

Կենդանի իրան գերեզմանի մէջ տեսնելը՝ մեծ զրոյց է։

Կին առնելը՝ մահուան վնաս է. կնոջ հետ խօսելը՝ տրտմութիւն է. մազերն արձակած կինը՝ նոյնպէս մահու վնաս է. գեղեցիկ զարդարած կինը՝ երկիր է կամ քաղաք. կնոջ մազ կտրելը՝ շատ վնաս է. կնոջ նայիլը՝ բարի և լաւ է։

Կիտրոնը՝ անոյշ խօսք է.

Կոյս.— իրան կոյս տեսնելը՝ խիստ շահ է. կոյսի հետ խօսելը տրտմութիւն է. կոյսի հետ հաց ուտելը՝ բարի է։

Կուժը՝— որդի է. ջրով կուժը՝ բոլորովին բարի է։

Կորեկը տանը տեսնելը կամ ուտելը լիութիւն է։

Կրակ ձգելը՝ մահ է և սով։

Կտաւ հանելը՝ բարի չէ։

Կօշիկ տանը տեսնել կամ հագնելը՝ ճանապարհ է։

Հ.

Հաց տեսնել՝ երազում բարի է և լաւ։

Հաւ.—հաւը ձուի վրայ՝ անակնկալ շնորհք է. հաւ-սիրամարգ մեծ իշխան է. հաւի խօսելը՝ մարդու կեանքից զրկուելն է։

Հաղորդ առնելը՝ մարդու ծեծ է.

Հասկ քաղելը՝ ուրախութիւն է։

Հարսանիքը՝ տրտմութիւն է։

Հայրապետը՝ մեծ զրոյց է։

Հայր.—մեռած հօրը կենդանացած տեսնել՝ մեծ շահ է։

Համր և խուլը՝ շահ է։

Հալաւ այրած տեսնելը՝ կնկանից շահուել է։

Հանդերձ կորցնելը՝ վնաս է.

Հեռաւոր տեղ իրան տեսնել՝ կամ ուրիշ մէկին՝ շահ է և բարի։



Հիմք ձգելը՝ հարստութիւն է։

Հիւանդը՝ նեղութիւն է։

Հող վեր առնելը՝ նեղութիւն է։

Հում միս ուտելը՝ մեծ զրոյց է։

Հոր փորելը՝ շատ նեղութիւն է։

Ձ.

Ձի.—սպիտակ կամ սև ձի նստելը՝ բարի է և պատիւ. վազող ձի նստելը խիստ լաւ է. սև ձի կամ ջորի նստելը մեծամեծներից շահ ստանալ է։ Ձի սարում տեսնելը՝ մեծութեան կը հասնես։

Ձեռը լուանալ՝ բարի է. ձեռիդ ըն-բուգ բռնած՝ որդի լինի քեզ։

Ձէթ եփելը՝ մուրազ և լաւ է։

Ձու տեսնել կամ ժողովելը՝ կռիւ է։

Ձոր տեսնել կամ անցնելը, նեղութիւնից կ'ազատուես։

Ձուկը՝ չար լեզու է.—Ջրից հանես՝ ամպ, ձիւն կամ ջերմ կ'լինի. ձուկը որ կրակին տեսնես՝ երկրի նեղութիւն է։

Ղ.

Ղամպար վառելը՝ բարի է։

Ճ.

Ճանապարհ գնալը ու գալը բարի է։

Ճուտն՝ երկայն ճանապարհ է։

Ճառ՝ գրած տեսնել կամ լսել՝ հոգս է։

Ճնճղուկ տեսնել կամ բռնելը՝ բարի է։

Ճրագ վառած՝ ծածուկ գործ կ՚յայտնուի. անցած ճրագը տան կործանումն է։

Մ.

Մատանի.—մատանին իշխանութիւն է. մատանին կոտրած՝ վնաս է. մատանին կորցնես՝ կինդ կամ սիրելիդ կ՚մեռնի. երկու մատանի ունենալը՝ երկու կին կ՚առնես. արծաթի մատանի՝ նեղութիւնից ազատուես։

Մարգարիտը՝ մեծութեան նշան է։

Մարդու լերդ ուտելը՝ գանձ գտնել է. մարդու ոսկոր ուտելը՝ բանտ մըտնել է. փոքր մարդը շնորհք է։



Մեխեր ժողովելը լեզուներ են։

Մեծահասակ իրան տեսնելը՝ փառք է։

Մեծ փակեղ ուսովդ ձգելը՝ շնորհք է։

Մեռել.—իրան մեռած տեսնելը՝ շատ ապրել է. մեռելն թէ խօսի զգուշ գաց մի հաւատայ. մեռել թաղելը՝ շփոթվել է. մեռելը գերեզմանում տեսնելը՝ չարը կ՚խափանուի. շատ մեռելներ տեսնելը՝ թշնամիներդ կ՚յարձակուեն։

Մեղր ուտելը՝ մեղք է և սրտնեղութիւն։ Մետաքս տեսնելը՝ օգուտ է։

Միս տեսնել կամ ուտելը հիւանդութիւն է. խորոված միս ուտելը՝ շահ

Միրգ ուտելը՝ հիւանդութիւն է։

Մոմը վառած՝ ուրախութիւն և որդի է։

Մորեխը՝ հոգս է և աշխարհի վնաս։

Մութը՝ վնաս է և չար։

Մուկը՝ նոյն է։

Մօրուքով իրան տեսնելը՝ շնորհք է։

Ն.

Նախիրը որ գեղը գնա՝ աւաղ է։

Նապաստակը՝ իրեն տղայ լինի։

Նաւ.—Նաւորդ լինելը՝ գլուխ դուրս գալ. ոսկու կամ արծաթի նաւը՝ բարի է. նաւ նստես՝ շատ կ՚ապրես. նաւերի խումբ տեսնես՝ շահ կ՚գայ քեզ. նաւը գանձով՝ նեղութիւն է. նաւ այրելը երկրի վնաս է. կոտրած նաւը՝ մահ է։

Նոր բան տեսնելը՝ օտարութեան կ՚երթաս։

Նուռը՝ օտարներից շահուել է։

Նստել և ողբալը՝ շատ նեղութիւն է։

Շ.

Շապիկ սպիտակ տեսնել կամ կարել՝ արդարութիւն է. սևն՝ տրտմութիւն է, աղտոտն մեղք է։

Շինութիւն կառուցանելը՝ բարութիւն է. քանդելը՝ վնաս։



Շաքարաջուր խմելը՝ իմաստութիւն է։

Շիշ իւղով՝ առճիկ և շահ է։

Շողը՝ փառք է։ Շորեր (նոր) ուրախութիւն և շնորհք է։ Շորեր գոյնզգոյն վնաս է։ Խայտաշորեր, աւաղ մարդ մեռնի։ Շորեր կորցնելը վնաս է։

Շուն.—շների իրար հետ կռուիլը՝ վատ է. շունը որ հաչէ կամ կծէ չար լեզու է և չար մարդից պէտք է զգոյշ լինել։

Ո.

Ոսկին կամ արծաթը՝ շահ է։ Ոսկէ խնձորը՝ պատիւ է։

Ոչխարը—ձմեռ է և ցուրտ. սև ոչխարը՝ սուգ և տրտմութիւն է. ոչխարը ճանապարհին հարստութիւն է։

Ողբալը՝ շատ նեղութիւն է։

Ուղտը – պարտն է. երկու ուղտի կռուիլը իշխաններ կ՚կռուեն. էգ ուղտ նստելը հիւանդութիւն է։

Որս գնալը՝ բարի է։

Չ.

Չամիչը՝ շատ վնաս է։

Չամանը՝ կռիւ և աղաղակ է։

Չանկը՝ տրտմութիւն է։

Չիրը՝ սակաւ շահ է։

Չուխայ.—կանանչ չուխան՝ հարստութիւն է. սեւը՝ տրտմութիւն։

Պ.

Պատարագը կռիւ է։

Պարտէզ տնկելը՝ բարի է։

Պղպեղը—կսկիծ է. պղպեղ ուտելը՝ թշնամիներից պատրաստ կաց։

Պսակ—արծաթի՝ հիւանդութիւն է. փշից պսակ շինելը՝ մեծ շահ է. քարից շինած պսակը՝ մեծութիւն է։

Պակուխը՝ լաւ է, յաճախ կռիւ է։

Ջ.

Ջաղաց—շինելը՝ մեծութիւն է. քանդելը՝ շինութիւն է. Ջաղացի աղունը հիւանդութիւն է։



Ջայլամը՝ նեղութիւնից կ՚ազատուես։

Ջուր սուրբ խմելը՝ լաւ է. պղտոր ջուրը տեսնելը կամ խմելը՝ տրտմութիւն է. տանդ մէջ ջուր տեսնելը՝ լաւ չէ. գնացող ջուրը՝ բարի է. գետից ջուր վեր առնելը՝ վնաս է. աղբիւրիցը՝ բարի է։

Ռ.

Ռեհանի ծաղիկը՝ բարի է։

Ռումբ—կանգնած ռումբը՝ մեծութիւն և պատիւ է. ձեռքին ռումբ բռնելը՝ ճանապարհ և երկիր է։

Ռուս տեսնելը՝ մեծ հակառակութիւն է։

Ս.

Սազը՝ մեծ մարդ է։

Սագը.—սագ ուտելը հիւանդութիւն է։

Սալորը՝ առողջութիւն է։

Սամիթ.—դալարը լաւ, չորը վատ է։

Սանդուղ (կանգնած) մեծութիւն է։

Սանդր բռնելը՝ զենք է։

Սենեակ քանդելը՝ կնոջից բաժանուիլ է։

Սերը՝ լաւ է, ուտելը հիւանդութիւն է։

Սիսեռը՝ բարի է։

Սիւնը՝ նեղութիւն և կռիւ է։

Սխտորը՝ կսկիծ է։

Սոխը.—կսկիծ է. ուտելը՝ հիւանդութ.

Սուգ անելը՝ ուրախութիւն է։

Սուլուխ տեսնել գանձ է։

Սուլթան տեսնելը՝ անչափ ցաւ է։

Սիրամարգ տեսնելը՝ մեծ եղջիւր է։

## Վ.

Վախեցած իրան տեսնել՝ օգուտ է։

Վանք և աբեղայ, նեղութիւն է։

Վառած. մեկին տեսնել վնաս է. իրան վառած տեսնելը հարստութիւն է։

Վարդ.—կին կ'առնես. վարդ քաղելը՝ բարի է։

Վերմակը հարուստ կին է։

Վիշապը մեծութիւն կամ վնաս է։



## Տ.

Տաճար զարդարած՝ բարի է. տաճար այրելը թշնամիքդ կը կոտրին։

Տաճիկը՝ թշնամիների յարձակումն է։

Տախտը՝ մեծութիւն է։ Տախտը տիպակով՝ բարի է. տախտը կանանչ ցաւ է։

Տանձ ուտելը՝ հիւանդութիւն է։

Տառեխ-ձուկը ճանապարհ է։

Տիկը տրտմութիւն է։

Տիկինը՝ նոյն է։

Տղայի գիրկն առնելը ցաւ է։

Տուն—շինելը՝ շատ բարի է. տուն քանդելը՝ վատ է. իր կամ ուրիշի տունն քանդուած տեսնելը՝ անիրաւութիւն է։

## Ց.

Ցեցը—լեզու է. ցեց հանելը՝ նեղութիւն կամ լաւ է։

Ցեխը՝ վնաս և տրտմութիւն է։

Ցորեանը՝ ցնորք է։

Ցուլ բռնելը՝ լաւ է։

## Փ.

Փայտը շատ բարի է։

Փոխինձ ուտելն՝ զէնք է։

Փող ածելը՝ մեծութիւն և բաղդաւորութիւն է։ Մարդուց փող առնելը շատ է, իսկ եթէ կինը առնի փող՝ տղայք կունենայ։

Փուշ կտրելը թշնամիների կորուստ է։

Փոքր մարդը՝ շնորհք է։

## Ք.

Քաղաք մտնելը՝ բարի է։

Քաղցր բան ուտելը՝ լաւ չէ։

Քար ձգելը՝ վնաս է. քար ժողովելը՝ լեզու է. քարից հիմք ձգելը՝ թշնամի է. քարի վրայ նստելը՝ ճռածմունք է։

Քացախ խմելը՝ չարը կ'խափանուի։

Քղամիտ հագնելը՝ խնդութիւն է։

Քահանայից խաչ առնելը վիշտ է։

Քօշ տեսնել ճանապարհ է ցոյց տալը։



## Օ.

Օձը.—Թէ հետդ խօսի, այնպիսի բան կ'անես որ բոլոր աշխարհը կ'զարմանայ. օձ թէ սպանես՝ թշնամուդ կ'յաղթես. մահճիդ վրայ եթէ օձ տեսնես՝ կին կ'առնես. օձը թէ խայթէ՝ թշնամիներից վնաս գայ. օձը թէ վրադ յարձակվի թշնամիներից ահ գայ. օձը թէ փորդ մտնի՝ թշնամիներդ կը չարախօսեն. օձին անկողնում սպանելը՝ կինը կ'մեռնի. օձ տեսնես և չվախես՝ թշնամիներիցդ անհոգ կաց. օձը տանդ մէջ տեսնես, կինդ կը թշնամանայ. օձին թէ երկու կտոր անես՝ թշնամուցդ շատ կ'գայ։

Օղի խմելը՝ ուրախութիւն է։

Օշինտր տեսնել կամ խմել՝ կռիւ է։

## ԵՐԱԶԱՑՈՅՑ ԼՈՒՍՆԻ

Լուսնի 1, 3, 5, 9, 13, 18, 19, 22, 26, 30 օրն—Երազն ի բարին կատ.
» 2, 10, 12, 16, 28—Երազն երեք օրն կատարի։
» 8—Երազն ութ օրն կատարի։
» 23—Երազն երեսուն օրն կատ.
» 14—Երազն քառաս. օրն կատ.
» 11, 15, 17—Երազն օրն կատ.
» 6—Երազն ի տարին կատարի։
» 29—Երազն լաւ է։
4, 7, 20, 21, 24. 25, 27—Երազըն սուտ է։

## ԻԳՆԱՏԻՈՍԻ ԱՐԱԾ ՓՈՐՁԵՐԸ

*մարդու մարմնի խալերի մասին։*

Գագաթը երբ խալոտ՝ բարի է, ամենքին սիրելի, իշխաններից պատուի, ճանապարհորդի, շահի և ուրախանայ։

Գաղտն՝ մեծութեան նշան է, ճանապարհ գնայ և ուրախանայ։

Գլխի վերի կողմը՝ պատիւ է և հոգս։

Գլխի ամբողջ խալալը՝ շատ բարի է, կորուստ կ՚ունենայ, գաղտնիք տեսնէ և լսի։

Ճակատը՝ շատերից պատուի, գանձ գտնի և մեծ փառքի հասնի։

Քներակն աջը՝ ազից ազատուի, կանանց պատճառաւ հոգս քաշի և մեռնի։

Ձախ քներակին՝ լռութիւն, շնորհք և պատիւ է կամ մարդու հետ կռուի։

Յօնքն աջը՝ կորուստը գտնել, և սրտին թեթևութիւն լինել.—ձախը՝ լռութիւն, կեանքի երկարութիւն շահի կամ տկարանայ.—յօնքի մէջը՝ նեղութեան համբաւ լսի, անկարգ բանի հանդիպի, տրտմի և վիրաւորուի։

Աչքը—աջ աղբիւրն՝ սրտնեղութիւն, տրտմութիւն է, բայց բարի լինի, թշնամու հետ կռուի, վէրք կամ լաց է.—ձախ աչքի աղբիւրն՝ բարի և առողջութիւն, հեռաւորին տեսնի և սրտնեղի. աջ աչքի յետի աղբիւրը՝ շատ բարի է հեռաւորին տեսնի, և խնդայ.—ձախ աչքի աղբիւրն՝ հարստութեան և մեծութեան հանդիպի, ազգականներին տեսնի խնդայ.—աջ աչքի վերի կոպը՝ հարստութիւն է, ցնծայ կամ սրտնեղի, արտասուի, բայց շուտ



ազատուի.—ձախ աչքի կոպը՝ ատելութիւն և լաց է. յետոյ բարի և ուրախութիւն.—աջ աչքի ներքի կոպն՝ հեռու ճանապարհ գնայ, հեռաւորին տեսանէ բարի և խնդութիւն է.—ձախ աչքի կոպն՝ ցնծայ, ցանկացածին հասնի.—աչքի աջ պտուղը՝ սրտնեղութիւն է.—ձախ աչքի պտուղը՝ բարի է.—աչքը ողջ խաղայ (աջու) բարի է, առողջանայ. հեռաւորն գայ —ձախ աչքն ողջ՝ շատ բարի, գանձ գտնի, սրտնեղի և զայրանայ.—աջու աչքը կոպերով՝ հեռաւոր տեսնի.-ձախը՝ հիւանդանայ բայց ապրի։

Արտևանունքը աջունը և վերինը՝ հեռաւորն գայ, տրտմի և իր կամքն կատարի.—ձախը՝ խնդայ և առողջութիւն գտնի.—աջ ներքի արտևանունքը՝ լաց և սրտնեղութիւն է.—ձախը՝ սրտնեղութիւն է, բայց հեռաւորն գայ։

Սկաւառակն՝ մեծ մարդերից պատուի։

Քիթն աջը քիչ հիւանդանալ, նեղու-
թիւնից ազատուի, կռուի.—ձախը՝ որդի
լինի, թշնամիներին յաղթի և առող-
ջանալ։

Քնթի ամեն մասերը՝ մեծերից շահ է։

Քնթի ծայրն, պարտքից ազատուի,
ցաւ կամ մարդու հետ կռուի։

Քթափողն՝ մարդու հետ սիրահարուի
կամ պարտքից ազատուի։

Քթի օղն՝ հարստանալ.—երկու պին-
ճը՝ հարստանալ, կամ սրտակիցն մեռնի։

Այտն—աջ, տրտմութիւն, հիւանդա-
նալ և առողջանալ.—ձախը՝ որդի լինի
սրտնեղի. խնդալ և հարստանալ

Երեսն—աջու, գանձ գտնի և առող-
ջութիւն է.—ձախը տրտմի, տկարանալ
վերք ստանալ և կեանքը կարճ լինի։

Ականջն—աջը—համբաւ լսի, խնդալ,
տկարանալ և ազգականն մեռնի.-ձախը



հեռաւորը գայ և առողջութիւն է։

Շրթունքի երկու կողմը՝ բամբասանք
լսի տրտմութիւն և սուգ է. Ներքին և
վերինը՝ իր սիրելիին համբուրէ։

Շրթունքները՝ բարի է, գումար ստանալ։

Պիղն—աջ՝ հեռու տեղից շահ գայ,
բան գտնի, հարստանալ.— ձախը խնդալ
հարստանալ և բամբասանք լսի. ամ-
բողջ վիզը նեղութիւն, տունը այրուի
վիզն սրով կտրուի։

Թիկնամէջն—աջը հարստանալ, բայց
սրտնեղի.—ձախը՝ այն բանը կ'անես
որ պատիւ չէ։

Թիկունքը-յորոգայթէ պատրաստ կացիր։

Արմունկն—աջը սէր է, պաշ-
տօն ստանալ, գլուխը ցաւի, տրտմի
հիւանդանալ և Աստուծով շուտով առ-
ողջանալ.—ձախը ցնծութիւն է, հիւր
գնալ, վիրաւորվի և հիւանդանալ։

Բազուկը—աջու, համբոյր է, ցնծալ և

հարստանալ.—ձախը բարի և շահ լինի, մարդկանցից պատիւ և գանձ գտնի։

Թեն—աջը ցաւ և նեղութեան հանդիպել.—ձախը փշտանալ։

Ձեռն—աջ եթէ աջ խաղայ - մեծերից պատուի, հարստանալ և ցնծալ, կամ դժբաղդութիւն պատահի, զգոյշ կաց.—ձախը բարի է, թագաւորից պարգև ստանալ, խնդա և հարստանալ։

Մատները—աջ ձեռքի կ'ուռանի, վերջը տխրալ կ'հանդարտի—ձախ ձեռքինը, գանձ և պատիւ է։

Ուսը—աջը՝ սառղջութեան նշան է և նոր շորեր հագնի.—ձախը խնդա Աստուածանից և մարդկանցից պատիւ և պարգև ստանալ։

Ծիծը—աջը ուրախանալ, ազգականները զօրանան, բազմանան.—ձախը հեռաւոր տեսնի, ընտանիքով խնդալ։

Կուրծքը—խնդութիւն, բարի համբաւ



հարստութիւն և սէր է.—աջը բարի, չարից ազատի, անկարգ գործի պատճառով զղջալ.—ձախը ամէնքը կ'սիրեն և չարից կ'ազատուես։

Սիրտը—սրտի նեղանալ է և տրտմութիւն.—աջը իր սիրելիքը շատանան և ուրախանան.—ձախը տրտմութիւն է։

Ողն—պսակուի, շատ կ'ծնի և մեծութեան կ'հասնի.—ողի մէջը բարի է։

Կողը—աջը մեծութիւն է, պսակուի, բարի և, ցնծութիւն է ինչ էլ խնդրես Աստուածանից կ'տայ.—ձախը շատ ծնի և սիրով հանգստանալ։

Փորը—լաց է և տրտմութիւն, վերջը մեծութիւն է և հարստութիւն։

Ծունկն—աջը վէճ է մեծութիւն և պատիւ է.—ձախը վատ լուրց լսի։

Սրունքը—աջը հարստութիւն է, մեծերից գովասանք, ահը կ'անցնի.—ձախը հարստութիւն է, նեղութիւնից ազատուի։

Անդամները—աջը բարի, խնդութիւն, վախենալ և տրտմութիւն է.—ձախը բարի է ուրախութիւն, բամբասուի և հետը թշնամանան։

Կոճը - աջը սիրելի մարդ կ'մեռնի և տրտմի.—ձախը վրան կ'խօսեն, բարի և ուրախութիւն է.—կոճի ներսը, բարի է և ուրախութիւն։

Նրբանը—աջը ճանապարհորդի, վախենալ, յետոյ բարի, և տրտմութիւնից ազատուի.—ձախը բանն աջողի և պատուի։

Թաթն—աջ ոտի, ուրախութիւն է և ճանապարհ գնալ.—ձախ ոտինը գանձ, բարի է և հարստանալ։ Ողջ թաթն—տրտմի իր ազգականից, ճանապարհ գնալ և իշխանութիւն ստանալ.—ձախ թաթն ազգականներից հեռանալ, տըկարանալ, ապրի և հարստանալ։

Ոտի մատները—աջու բոլոր հինգ մա-



տերը՝ ճանապարհ գնալ, բարի լինի, ցնծալ, պարգև ստանալ.—ձախունը դատաստան, նեղութիւն, վերջ է և աղքատանալ։

Ճկոյթը ոտի—աջը մեծութիւն, հարստութիւն, կամքը կատարի կամ բան կորցնի.—ձախը տրտմի մեծից, սիրելիների մէջ աղմուկ, գանձ և առողջութիւն գտնի։

Բութը ոտի—աջը ուրախանալ, հեռաւորն գալ, հարստանալ.—ձախը առողջութիւն, հեռաւոր տեսնի և սաստիկ հիւանդանալ։

Ճկոյթը մատի—աջը, գանձ, հարստութիւն է, ի'զօր է տրտմում, և կ'ծօշեն.—ձախը վէճ է և աղմուկ. կ'բամբասեն, և կ'ուրախանայ։

Ձեռքը ողջ—աջը տրտմի բայց յետոյ սիրտը կ'հանգստանայ, չարը հեռանայ.—ձախը, գանձի և պատուի հանդիպի։

Թուշը—աջը թշնամիներից պատրաստ կաց.—ձախը բարութիւն է։

Կզակը—աջը կռիւ է, ոխարանալ, Աստուծով ազատուի.—ձախը հեռաւորն գալ, ճանապարհ գնալ, առողջանալ և ցնծալ։

Երեսը—աջը առողջութիւն և գանձ է.—ձախը տրտմի, ոխարանալ, (զգուշ պիտի լինել) և շուտով կ'մեռանի։

*) Թէև երազահանների և դրանց նման հրատարակութիւններն աւելորդ և աննպատակայարմար են տպագրութեան, բայց գաւառական մեր մի քանի գործակալների անընդհատ պահանջին գոհացում տալու համար, հակառակ մեր ցանկութեան, հրատարակում ենք այս „Նիւկատար երազահանը" (աշխարհաբարի փոխուած), վերապահելով մեզ նրա արտատպելու իրաւունքը։ Տ. Աշխ.



# ԶՈՒԱՐՃԱԼԻՔ *).




*) Այս զուարճալիքը զետեղում ենք որպէս խաղ՝ մեր ընթերցողների համար։ Տան. Աշխ.

Հետևեալ VI բաժանմունքների հարցերից ամեն մինը, ցանկացողները իրանց մտքումը պահում են և գնդակը գցում են վերը նշանակած շրջանի մէջ տեղը։ Իսկ պատասխանը պէտք է գընդակի տակի թուերի մէջ փնտռել։

---

## I. Բաղդաւոր կը լինիմ արդեօք։

—

1. Այո կը լինես, բայց ծոյլ ես։
2. Որ չես աշխատում ինչ կը լինես։
3. Եթէ առաւօտները վաղ զարթնես։
4. Գործիդ արի եղիր միայն։
5. Եթէ այդ ուրիշին ես ցանկանաս։
6. Խնայողութիւն չունես։
7. Քեզ այնպէս չես պահում՝ որ լինես։
8. Ինչ կը ցանես, այն էլ կը հնձես։
9. Որդկերանցով՝ ծեր ժամանակը։



10. Ամենքի հետ չես վարվում. կ'ոչնչանաս, այդպէս մի շարունակի։

---

## II. Յաջողութիւն կ'ունենամ։

—

1. Միայն ճարպիկ և հեռատես եղիր։
2. Եթէ քեզ աւելի խոնարհ պահես։
3. Եթէ ազնիւ և չափաւոր լինիս։
4. Կանանց միջոցով ամեն բանի կը հասնես։
5. Միայն թէ թողնես յիմարութիւններդ։
6. Բոլորը՝ քո գիտենալուցն է կախուած։
7. Միայն հարսնացուն հարուստ պէտք է լինի, թէկուզ տարիքը 60-ից էլ անց։
8. Եթէ եռանդով գործես։
9. Առանց այն էլ ինքդ լաւ կաս։
10. Այնպէս, ինչպէս ինքդ ցանկանաս։

## III. Իմ իղձալս սիրո՞ւմ է ինձ արդեօք։

—

1. Նայիր հայելուն, տես արդեօք կարելի՞ է քեզ սիրել։ Դեռ ասում ես որ ինքնասէր էլ չեմ։

2. Սիրում է, բայց ծածկում է։

3. Չի էլ մտածում այդ մասին։

4. Բայց քեզ հետ և ուրիշներին էլ է սիրում։

5. Նայելով թէ ի՞նչ ես ընծայելու։

6. Չես ամաչում, ինչ քո սիրելուդ ժամանակն է։

7. Սիրում է, միայն թէ մինչև քո կարողութեան վերջին կոպէկը։

8. Քեզ շատ սիրելուց տանջւում է։

9. Միայն քանի որ տեսնում է քեզ։

10. Շատ քիչ։

---



## IV. Շուտ կը լինի արդեօք իմ հարսանիքը։

—

1. Երբէք, եթէ վերջդ չմտածես։

2. Երբ քո քէփն է, միայն զգուշացիր։

3. Ո՞ւմն ես պէտք կամ ումն ինչ։

4. Մինչև քեզ չ՚ապահովես։

5. Երբ բարեկամ գտնես։

6. Երբ խելօքանաս։

7. Շատ ուշ ես մտածում։

8. Որ միտք չ՚ունես՝ լաւ է մի վանք մտնես։

9. Շատ, հէնց այս տարի, բայց չես աշխատում։

10. Ունեցած առաւելութիւններդ գործ դիր։

---

## V. Եկող տարի ինչպէս կը լինի։

—

1. Նայելով թէ դու ինչ կը լինես։

2. Լաւ, եթէ խելքդ գլխիդ պահես։

3. Եթէ առաջուց առած ունենաս վիճակահանութեան տոմսակ, կը տանես։

4. Ամառը շոգ, ձմեռը ցուրտ։

5. Հարուստների համար լաւ կը լինի։

6. Խելքիդ զոռ կը տաս, փողեր կը ծախսես։

7. Այդ վատ բնաւորութիւնդ չես փոխի։

8. Բանդ որ պինդ չբռնես՝ շատ վատ կը լինի։

9. Ուրախ և բաղդաւոր. միայն զգոյշ եղիր։

10. Փողեր շատ կ'ստանաս, շատ էլ կը ծախսես՝ տակը բան չի մնայ։

---

## VI. Երկար կ'ապրեմ արդեօք։

1. Ամէն բանի մէջ չափաւոր լինելով, հարիւրից կ'անցնես։



2. Ոչ մի կողմից քեզ չես զսպում, ինչ երկար կ'ապրես։

3. Այնքան անգամ մէկ ու կէս, որքան ծնողքդ։

4. Եթէ պարտքեր չանես, իննըսուն և իննը։

5. Անչափ աչքածակութիւնդ, կեանքդ կարճացնում է։

6. Ապրես՝ չապրես. ինչ օգուտ, երբ ոչ քեզ համար ես և ոչ ուրիշի։

7. Ինն անգամ ինը տարի, բայց ցրտից զգուշացիր։

8. Գլուխդ հով, փորդ թոյլ և ոտքերդ տաք պահելով շատ երկար կապրես։

9. Նախանձոտ սիրտդ կեանքիդ ցեցըն է, մինչև չըթողնես այդ, երկար ապրելու յոյս մի ունենայ։

10. Ինչպէս թունդ քացախը իր ամանն է տրաքացնում, այդպէս էլ այդ նախանձոտութիւնդ՝ կեանքդ է կարճացնում։

## ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆ

## ՀԱՇԻՒ

| Թ/ւ | | Ր. | Կ. |
|---|---|---|---|
| | | | |

| Թիւ | | Ր. | Կ. |
|---|---|---|---|



| Թիւ | | Ր. | Կ. |
|---|---|---|---|

| Թիւ | | Ր. | Կ. |
|---|---|---|---|
| | | | |

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
Ա. Մ... им. А. Мясникяна

6027

## 2) Տօնք Կայսերականք։

Ապրիլ 23. Անուանակոչութիւն Ն. Կ. Մ. Կայսրուհւոյ Աղէքսանդրա Ֆէօդորօվնայի։

Մայիսի 6 Ծնունդ Ն. Կ. Մ. Կայսեր Նիկօլայ Աղէքսանդրովիչի։

Մայիսի 14 Թագադրութիւն Ն. Կ. Մ. Կայսեր Նիկօլայ Աղէքսանդրովիչի և Աղէքսանդրա Ֆէօդորովնայի։

» 25. Ծն. Ն. Կ. Մ. Թագուհի-Կայսրուհւոյ Աղէքսանդրա Ֆէօդորօվնայի։

Յուլ. 22. Անուանակոչ. Ն. Կ. Մ. Այրի-Կայսրուհւոյ Մարիա Ֆէօդորօվնայի։

Օգ. 25. Յիշ. նուաճ. արևել. Կովկասու։

Հոկտ. 21 գահակալութիւն Ն. Կ. Մ. Կայսեր Նիկօլայ Աղէքսանդրովիչի։

Նոյեմբերի 14. Ծն Ն. Կ. Մ. Այրի-Կայսրուհւոյ Մարիա Ֆէօդորօվնայի։

Նոյեմբ. 22 Ծնունդ Ն. Կ. Մ. Թագաժառանգ Միխայիլ Աղէքսանդրովի[illegible]

Դեկտ. 6. Անուանակոչութ[illegible] Մ. Կայսեր Նիկօլայ Ա[illegible]

2013
ՀՀ Ազգային գրադարան
NL0032324

«Ծոյլ», «Պատիւ» և «Սեղանիս» օրացոյցները (երեքը միասին) ճանապարհածախսով արժեն մէկ րուբլի։

„Армянскій Календарь“ съ предсказаніями ц 20 к

Վաճառվում են Մ. Ճմշկեանի և Թիֆլիսի յայտնի գրավաճառանոցներում, նոյնպէս բոլոր Թղթեղէնների խանութներում։ Մեծ քանակութեամբ գնողները աւելի զիջում ստանալու համար դիմում են հետևեալ հասցէով — Тифлисъ. Макару Чимшкіанцу.

Օրացոյցների մէջ տպագրւում են յայտարարութիւններ զանազան լեզուներով և ամենաարժան գնով։ Ցանկացողները դիմում են վերոյիշեալ հասցէով։

Գի

059
9-70